

Ամսի 16-ին զանգ ստացա ամուսնուցս, որին սպասում էի 45 օր: Վերջին անգամ, երբ խոսեցինք, նա հացադուլ էր անում, չկարողացանք պարզել՝ դադարեցրո՞ւ է, թե՞ ոչ: Ոչ ոք չգիտի, թե որքան ցավ էի զգում, հատկապես, երբ լսեցի, որ չի կարողանում քայլել, ցավեր ունի, դեղորայք չի ընդունում, լավ չի ուտում՝ միայն թեյ ու հաց:

Կարդացեք՝ էջ 4



Ուրեմն 8 տարի պառակտել, հայիոյել, թշնամացրել են, նոր հասկացել են այն, ինչի մասին մենք խոսում էինք 2018-ից սկսած: Խառնակչություն են արել, ընտանիքներ ու ընկերներ են բաժանել իրարից, մասնագիտական խմբերի ու անհատ մարդկանց թիրախավորել, ամիսներով, տարիներով հալածել են, դատարան ու բերդ են գցել մարդկանց:

Կարդացեք՝ էջ 5

Նոյեմբերյանցի վաճառողուհիները դժգոհ են, որ «88» սուպերմարկետի երեւանցի վաճառողն ամեն հերթափոխի համար ստանում է 9 հազար դրամ, իսկ իրենք՝ դրանից 3 անգամ քիչ: Այդ տարբերության մասին մենեջեր Նարեկ Մարտիրոսյանն ասաց, որ Երեւանում սուպերմարկետը բազում անգամներով ավելի շահույթ է ապահովում, դա է պատճառը:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 195 (4097), 3 դեկտեմբեր, չորեքշաբթի, 2025

www.hraparak.am

Կառավարության մեր աղբյուրներն ասում են, որ Նիկոլ Փաշինյանն օրերս ընդունել է Ռուբեն Ռուբինյանին, որպեսզի քննարկեն Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման ընթացքը եւ սահմանի բացման հետ կապված իրավիճակը: Մեր աղբյուրն ասում է, որ Ռուբինյանը զեկուցել է՝ Թուրքիայի հետ սահմանների բացման գործընթացն արագացնելու փորձերն առայժմ ոչ մի հաջողության չեն հասնում, եւ մեծ է հավանականությունը, որ նույնիսկ TRIPP-ի գործարկումից հետո Թուրքիան չի բացի սահմանները, եւ առավելագույնը, ինչ կարելի է ակնկալել, 2026 թվականի հունվարից դիվանագիտական անձնագիր ունեցողների համար սահմանի բացումն է: Դա էլ դեռ հաստատ չէ: Ըստ մեր աղբյուրի, Փաշինյանն արձագանքել է, որ եթե Թուրքիան չբացի սահմանները, ապա TRIPP նախագծի շահութաբերությունը եւ իմաստը կասկածի տակ կդրվեն, եւ նշել է, որ ինքն անձամբ կխնդրի Թուրքիայում ԱՄՆ դեսպան Բարաքին՝ այդ տեղեկությունը փոխանցել Թրամփին, որպեսզի նա ճնշում գործադրի Էրդողանի վրա: Վարչապետի աշխատակազմում տեղեկանալով այս խոսակցության մասին, որոշ պաշտոնյաներ չեն կարողացել թաքցնել իրենց վերաբերմունքը. «Սկզբում ամբողջ աշխարհով մեկ գոռում են կոմունիկացիաների բացման մասին, որոնք միլիարդներ պետք է բերեն երկիր, իսկ հետո սկսում են մտածել, թե ինչպես համոզեն թուրքերին, որ բացեն սահմանները»:

ՔՊ-ում կատակում են՝ ով գրել գիտի, պատգամավորի թեկնածուի դիմում է գրել. 380 մարդ է առաջադրվել, 40-ը՝ անկուսակցական: Մեծ մասը շարքային կուսակցականներ են՝ մարզերից, պատգամավորների օգնականներ, փորձագետներ: Եթե ինքնավնասումով բանակից ազատված, «սեկտեմբեր» ասող Նարեկ Գրիգորյանը, Մարտի 1-ի զոհի քույրը՝ Անուշ Քլոյանը, կարող են պատգամավոր լինել, ով ասես՝ կարող է: Ի դեպ, առաջադրվել է անգամ Քլոյանի օգնականը, ինչից անգամ ՔՊ-ականներն են տարակուսած: Դեկտեմբերի 1-ից սկսվել է գրանցման փուլը, քննելու են կենսագրությունները, ստուգելու են՝ որեւէ քրեական գործով անցնո՞ւմ է թեկնածուն: Բայց ՔՊ վերնախավը դժվար կացության մեջ է. մի կողմից ցուցակն անծայրածիր չէ՝ նախորդում 157 անուն էր, մյուս կողմից՝ ամեն մեկը փող է բերելու կուսակցությանը. ՔՊ անդամները՝ 500 հազար, անկուսակցականները՝ 1,5 միլիոն դրամ: Նաեւ պետք է հիմնավորեն, թե ինչու չեն գրանցում: 380 հոգուց ՔՊ բյուջե մուտք կլինի 230 մլն դրամ՝ 600 հազար դոլար: Հայտ է ներկայացրել նաեւ Կոջոյանի անվան դպրոցի տնօրեն Ռուզաննա Երեմյանը՝ շրջիկ պատարագների ակտիվ մասնակիցը:

Վերադարձրու 2019-ի կարգավիճակը

Վերջապես Նիկոլ Փաշինյանն «ինչ-որ սառնարանի ոտի տակից ու կոնդիցիոների միջից» գտավ բանակցային փաստաթղթերը, որոնցից ամենաթարմը 2019-ով է թվագրված, եւ հրապարակեց: Ապա, հավանաբար վախենալով, որ բանակցային գործընթացից գլուխ հանող փորձագետները կբացահայտեն, թե ինչ խայտառակ սխալների արդյունքում է ինքը տանուլ տվել Արցախը, մի անստորագիր «պարզաբանում» հրապարակեց, թե այդ թղթերը կարդալով՝ ինչ է պետք հասկանալ: Իսկ դրանք կարդալով անձամբ ես հիշեցի Շուշիի մասին իր հայտարարությունը, երբ պատերազմից հետո ասաց. ի՞նչ տարբերություն՝ Շուշին կտայի՞նք, թե՞ ադրբեջանցի փախստականները հետ կգային ու կապրեին Շուշիում: Հիմա մեզ փորձում է համոզել՝ ի՞նչ տարբերություն՝ արցախցիները կապրեին Արցախում, եւ հանրաքվե կարվեր, կամ ինչ-որ կարգավիճակի շուրջ քննարկումներ կգնային, թե՞ տուն-տեղ թողած՝ կարտագաղթեին Հայաստան: Փորձում է համոզել, որ 2016-ին բանակցային գործընթացը եկել հանգել էր 1991-ի մակարդակին, որ այդ տարիների ընթացքում միայն քննարկվել է Ադրբեջանի կազմում Ղարաբաղի ինքնավարության հարցը, այլ ոչ մի ուրիշ բան: Ահա. «Բանակցությունների հիմնական առարկան եղել է այն, որ Ղարաբաղի շրջակա բոլոր 7 շրջանները փաթեթային կամ փուլային տարբերակով պետք է վերադարձվեին Ադրբեջանին, իսկ բուն Ղարաբաղի կարգավիճակը պետք է բանակցվեր միմիայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության ներքո»: Եկեք չվիճենք, որովհետեւ այս 8 տարում պետք է հասկացած լինեինք, որ նրա հետ վիճելն անիմաստ է՝ նա ուղղակի ունակ չէ ադեկվատ կարծիք, առաջարկ, միտք լսելու: Եկեք ասենք՝ դու միանգամայն ճիշտ ես, հիմա ուզում ենք, որ Արցախը վերադառնա գոնե Ադրբեջանի տարածքում ինքնավարության կարգավիճակին: Կարո՞ղ ես ապահովել:

Ռոբերտ Քոչարյանը նոյեմբերի 30-ին հանդիպել է մի խումբ աջակիցների հետ, փակ ֆորմատով հանդիպումից մի կարճ, «համր» տեսանյութ են տարածել, մի քանիսը լուսանկարներ են տեղադրել, սակայն քննարկման բովանդակության մասին՝ ոչ մի խոսք: Նախատեսվում է, որ առաջիկա օրերին ինչ-որ դրվագներ կհրապարակայնացվեն: Ներկաներից մեկը պատմեց, որ ամենատպավորիչ հատվածը Սերժ Սարգսյանի վերաբերյալ հնչած հարցն է եղել՝ եթե իշխանության գաք, Սերժ Սարգսյանին պատասխանատվության կենթարկե՞ք Ձեր նկատմամբ բացասական տրամադրություններ գեներացնելու համար: Քոչարյանը մոտավորապես ասել է, որ այդ էջն ինքը վաղուց փակել է իր համար: Ռ. Քոչարյանը նաեւ ուղիղ չի պատասխանել, սակայն տողատակերում հասկացրել է, որ ինքն է գլխավորելու ընտրական ցուցակը, իսկ իր աջակիցներին հորդորել է տեղերում շատ աշխատել:

ՈՎ՝ ՄՆԱՑ, ՈՎ՝ ԳՆԱՑ

Երեկ հայտնի դարձավ, որ որոշ պատգամավորներ չեն առաջադրվել որպես պատգամավորության թեկնածու: Նրանցից ոմանք բացատրեցին, թե իրենք ջանք ու եռանդ չեն խնայելու թիմի համար աշխատելու, սակայն ՔՊ-ում գիտեն, որ նրանց քծնանքն ու ջանքերը մի պատճառ ունեն՝ Փաշինյանի բարեհաճությունը շահել, որ չպատժի չառաջադրվելու համար եւ թողնի՝ «ապրեն»: Բայց նրանցից ոմանք տողատակերում հասկացնում էին, որ համաձայն չեն ՔՊ-ի կուրսի հետ, օրինակ, ԱԺ փոխխոսնակ Հակոբ Արշակյանը, որը, փաստորեն, «կուլ չտվեց» իր նկատմամբ անարգանքը, երբ թույլ չտվեցին մասնակցել համագումարին՝ 30 հազար դրամ անդամավճարն ուշացնելու համար: Քրիստինե Պողոսյանը՝ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի մտերիմը, որը նրա նկատմամբ քրեական հետապնդումից հետո օտարվեց ՔՊ-ից: Լիլիթ Կիրակոսյան անունով մի պատգամավոր էլ չի առաջադրվել, բայց նրա մասին հանրությունը ոչինչ չգիտի, որովհետեւ 4 տարի ծպտուն չի հանել: Մի մասն էլ հասկացել է, որ շանս չունի ընդգրկվելու: Իսկ Աննա Հակոբյանի եղբորը՝ Հրաչ Հակոբյանին, ընտանիքն է հետ պահել առաջադրվելուց, որ փեսա-աներձագ, ազգուտակին առաջ բրթելու մեղադրանքները նվազեն: Երբեմնի ակտիվիստ Լենա Նազարյանն էլ է վերջին տարիներին անհետացել, նրան Աննա Հակոբյանն իր թեւի տակ է առել «Իմ քայլը» հիմնադրամում: Խաչատուր Սուքիասյանն իր որոշումը համաձայնեցրել է Փաշինյանի հետ: Ի դեպ, չնայած Տիգրան Ավինյանն առաջադրվելու ցանկություն չի ունեցել, բայց հասկանալով, որ գլխացավանքի մեջ կընկնի, վերջին օրերին փոխել է որոշումը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՇԱՏ ՀԱՁՎԱԴԵՊ Է ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴԻՄՈՒՄ ԿՈՊԻՏ ԿԱՄ ԿՏՐՈՒԿ ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ

*«Հրապարակի» զրուցակիցը Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (ՄԳԻՄՕ) ավագ գիտաշխատող **Նիկոլայ Սիլաեւն** է:*

- Չնայած Հայաստանը շարունակում է չմասնակցել ՀԱՊԿ նիստերին, սակայն պաշտոնական հայտարարություն է հնչել, որ չեն խոչընդոտելու որոշումների ընդունմանը: Ինչպե՞ս եք մեկնաբանում այդ հայտարարությունը:

- Սա ցույց է տալիս ՀԱՊԿ-ում մասնակցություն չունենալու Հայաստանի ցանկությունը: Իսկ եթե հարցին պատասխանենք ավելի լայն, ապա իրավիճակը հետեւյալն է. Հայաստանը 2022-ի աշնանն ակնկալում էր ավելի ուժեղ արձագանք ՀԱՊԿ-ից՝ երկրի հարավում Ադրբեջանի դեմ ռազմական գործողությունների ժամանակ: Եվ երբ ՀԱՊԿ-ի արձագանքը բավականաչափ համոզիչ չէր, բավականաչափ կոշտ չէր, Հայաստանը որոշեց այդ ճանապարհով ՀԱՊԿ-ին, մասնավորապես՝ Ռուսաստանին, ազդանշան տալ, որ ավելին էր ակնկալում: Բայց քանի որ Ռուսաստանի եւ ՀԱՊԿ-ի կողմից ավելի կոշտ դիրքորոշում չեղավ, Հայաստանի իշխանություններն աստիճանաբար բարձրացրին այդ ազդանշանն ուղարկելու հաճախականությունը, ուժեղացրին մինչեւ այն կետը, որ պաշտոնական Երեւանը սառեցրեց իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին: Հիմա Հայաստանի իշխանությունների համար մի տեսակ անհարմար է ՀԱՊԿ-ից դուրս գալը, որովհետեւ դա Հայաստանին կզրկի այն երաշխիքներից, որոնք կան: Այո, կարելի է վիճել, թե որքանով այդ երաշխիքները կան, կամ որքանով են դրանք աշխատող կամ զսպող հանգամանք հանդիսանում, սակայն այդ երաշխիքները գոնե կան: ՀԱՊԿ-ից դուրս գալու դեպքում Հայաստանն այդ երաշխիքներից կզրկվի, իսկ ՀԱՊԿ-ի աշխատանքներին վերադառնալով՝ լռելյայն համաձայնում է կազմակերպության արձագանքի հետ՝ Ջերմուկում տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ, որոնք տեղի ունեցան 3 տարի առաջ: Եվ երկրորդը. պաշտոնական Երեւանը չի ուզում վերադառնալ ՀԱՊԿ, այդ պատճառով էլ Երեւանի եւ ՀԱՊԿ-ի հարաբերություններն այն վիճակում են, որ հիմա կան:

- Այսինքն, ՀԱՊԿ-ում ՀՀ իշխանությունների այս քաղաքականության պատճառը հենց դա է եւ ոչ թե այն, որ, ինչպես շատ քաղաքագետներ են ասում, ՀՀ ներկա իշխանություններն Արեւմուտքի կողմն են գնում եւ վարում են Ռուսաստանը տարածաշրջանից դուրս մղելու քաղաքականություն: Դուք այդ ամենը բացատրում եք Ջերմուկի դեպքերո՞վ:

- Ոչ, ես դա բացատրում եմ ոչ միայն Ջերմուկում 2022-ին տեղի ունեցածով, առաջին հերթին, դա բացատրում եմ Ջերմուկից հետո տեղի ունեցած դեպքերի հաջորդականության շղթայով: Երկրորդը. ինձ համար այդքան էլ հասկանալի չեն բացատրությունները, որոնք այս կամ այն պատճառները կամ իրադարձությունները պայմանավորում են առաջին հերթին այս կամ այն քաղաքական լիդերների քաղաքական դիրքորոշումներով ու քաղաքական իդեոլոգիաներով: Իհարկե, ՀՀ իշխանությունները չեն էլ թաքցնում, թե ինչ վերաբերմունք ունեն Ռուսաստանի հանդեպ, եւ տարօրինակ կլինի դա չնկատել: Հայաստանի ղեկավարությունն այդ մասին հայտարարել է թե՛ ուղիղ, թե՛ երբ համապատասխան հայտարարություններն արվում են իշխող կուսակցության կամ պրոիշխանական լրատվամիջոցների կողմից, մեզ ամեն ինչ հստակ բացատրել են: Ինձ թվում է, իդեոլոգիայի մասին խոսելուց բացի, պետք է խոսել նաեւ Հայաստանի շահերի, Հայաստանի իշխանությունների քաղաքական մարտավարության, պետք է խոսել իշխանությունների քաղաքական ռազմավարության մասին: Այս դեպքում, իմ կարծիքով, նրանց գործողությունները սխալ էին, քանի որ դրանք չկարողացան ՀԱՊԿ-ում Ռուսաստանի կողմից ավելի կոպիտ ռեակցիայի հասնել, իմաստ չկար ՌԴ-ին տրվող ազդանշանն ավելի ուժեղացնել ու դեմոնստրատիվ ցույց տալ, թե Հայաստանն ինչքան դժգոհ է: Ըստ իս, ճիշտ որոշում կլիներ ընդունել առաջարկվող որոշումը՝ ՀԱՊԿ-ի դիտորդական առաքելության մասով, որը պետք է իրականացվեր սահմանի երկայնքով: Հայաստանն ինքնիշխան պետություն է, ես չեմ բացառում, որ այն կուրսը, որ Հայաստանի իշխանությունները որդեգրել են ՀԱՊԿ-ի մասով, կապված է եղել նաեւ այն հանգամանքի հետ, թե որքանով է Արեւմուտքը ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի մասով պատրաստ ընդունել Հայաստանին, եթե հանկարծ Հայաստանը դուրս գա ՀԱՊԿ-ից: Պարզվեց, Արեւմուտքն այդքան էլ պատրաստ չէ Հայաստանին ընդգրկել իր ռազմաքաղաքական համակարգերում: Բայց արդեն ուշ էր, որովհետեւ ՀԱՊԿ-ում իրենց մասնակցությունը սառեցնելու մասին հայտարարություններն արդեն արվել էին, եւ դժվար էր դրանից հետո վերադառնալ հետ:

- Այսինքն, հույսերը չարդարացա՞ն:

- Ես չասացի դա, Դուք ասացիք:

- ՀԱՊԿ վերջին նիստին Պուտինը հայտարարեց, որ Ռուսաստանն ակտիվ համագործակցելու է ՀԱՊԿ դաշնակիցների հետ՝ ռազմական պոտենցիալն ամրապնդելու ուղղությամբ, եւ շեշտադրումը դրվելու է մարտական պատրաստվածության բարձրացման ու կոլեկտիվ պաշտպանողականությունը բարձրացնելու վրա: Այս հայտարարությունը Հայաստանին վերաբերո՞ւմ է, թե՞ ոչ:

- Ես կարծում եմ, որ սա Հայաստանին վերաբերում է ուղիղ այնքան, որքան Հայաստանը պատրաստ է միանալ ՀԱՊԿ-ում տեղի ունեցող միջոցառումներին: Եթե Հայաստանը վաղն ասի՝ մենք վերջացնում ենք այս սառեցումը, մեզ մոտ ոչինչ չի ստացվում, կարող են նույնիսկ պարզապես ասել, որ վերջացնում ենք սառեցումը, որ պատրաստ են միանալ ՀԱՊԿ շրջանակներում անցկացվող զորավարժություններին, Հայաստանին կընդունեն սիրով եւ լայն բացված ձեռքերով:

- Պուտինը դա՞մ էր ակնարկում, երբ ասում էր, որ հասկանում է հայ գործընկերներին, ովքեր չնայած չեն մասնակցում, սակայն որոշումների ընդունման մասով խոչընդոտներ չեն ստեղծի:

- Այո, ռուսական կողմի դիրքորոշումը հետեւյալն է. եթե դուք ուզում եք դեռեւս այդ ռեժիմով գործել, ուրեմն այդպես արեք, եթե դուք որոշեք վերադառնալ ՀԱՊԿ-ում լիարժեք մասնակցության, ապա վերադարձեք:

- Իսկ ինչո՞վ եք բացատրում ջերմ վերաբերմունքը Հայաստանի իշխանությունների նկատմամբ:

- Ջե՞րմ...

- Այո, տպավորություն է, որ նրանց ներվում է ամեն ինչ, ցանկացած հակառուսական քայլ:

- Ռուսաստանի հանդեպ ի՞նչ են նրանք արել, որ չէր կարելի նրանց ներել:

- Նույն՝ ռուսական կողմն է ամենաբարձր մակարդակներով պարբերաբար դժգոհում ՀՀ իշխանությունների այս կամ այն քայլերից:

- Ռուսաստանի դիվանագիտության ոճը միշտ է, որ հասկանալի է Սովետական Միության մեր նախկին գործընկերների համար, չնայած թվում է, թե նրանք պետք է որ մեզ լավ ճանաչեին: Խնդիրն այն է, որ Ռուսաստանը գրեթե միշտ մաքսիմալ փափուկ է խոսում, Ռուսաստանը շատ հազվադեպ է իր դիվանագիտական պրակտիկայում դիմում կոպիտ կամ կտրուկ հռետորաբանության: Բացառիկ երկրների, բացառիկ դեպքերի պարագայում է նման հռետորաբանություն կիրառվում: Այս տարիների ընթացքում ի՞նչ են արել Հայաստանի իշխանությունները Ռուսաստանի նկատմամբ: Նրանք կտրուկ մեծացրել են հակառուսական խոսույթը հայկական լրատվամիջոցներում: Պարզ է, որ մեզ ասում են, որ Ռուսաստանում էլ ռուսական լրատվամիջոցներում են հակահայկական հռետորաբանության չափաբաժինը մեծացրել, ինչն իրականում այդքան էլ այդպես չէ: Ուրիշ ի՞նչ են արել. ոչ բարեկամական քայլերից մեկը Միջազգային քրեական դատարանի ստատուտի ռատիֆիկացիան էր: Ընդ որում, շատ հետաքրքիր ստացվեց, որովհետեւ սկզբում Երեւանում մեզ բացատրում էին, որ դա պետք է անեն, որպեսզի Ադրբեջանի դեմ դատական գործ բացեն, որը չի հանդիսանում Միջազգային քրեական դատարանի անդամ, իսկ հետո, երբ հրապարակվեց Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության պայմանագրի նախնական ծրագիրը, պարզվեց, որ կողմերը պայմանավորվել են միջազգային դատարաններում առկա բոլոր հայցերը միմյանց դեմ հետ կանչել: Ստացվում է, որ հռոմեական ստատուտի ընդունումը, բացի հակառուսական քայլից, որեւէ այլ բովանդակություն չունի: Չկա վստահություն, որ Հայաստանի ղեկավարությունն ունի հստակ ստրատեգիկ գիծ, ուղղություն: Ես ենթադրում եմ, որ շատ որոշումներ ընդունվում են իրավիճակի ազդեցության տակ, հետո այդ որոշումները նոր իրավիճակներ են ստեղծում, հետո այդ նոր իրավիճակներն իրենց հետ բերում են նոր իրավիճակներ: Իսկ Ռուսաստանի հետ հարաբերություններում էլ դա հաճախ պատահում է:

- Ռուսական մեդիայում հակահայկական խոսույթի մասին ի՞նչ կասեք:

- Հայաստանի իշխանությունները հակահայկական հռետորաբանություն են որակում Հայաստանի իշխանությունների դեմ ուղղված քննադատությունը: Ռուսական մամուլում իսկապես շատ են Հայաստանի իշխանություններին ուղղված քննադատությունները, սակայն դա բացարձակապես կապ չունի հակահայկական հռետորաբանության հետ: Ռուսաստանում շատ քննարկվեց այն հեռուստատեսային շոուն, որի ժամանակ կարծիքներ հայտնելիս շատ տհաճ ձեւակերպումներ հնչեցին: Նաեւ ասվեց, թե Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մարդիկ չէին ուզում պաշտպանել Սովետական Միությունը, եւ նրանց ուժով էին քշում մարտադաշտ: Դա ճիշտ չէ, քանի որ Հայրենական մեծ պատերազմն ամբողջությամբ եւ հատկապես առաջին ամիսները հայտնի էր սովետական զինվորների մասսայական հերոսություններով: Դա նույնն է, թե ռուսական թերթում կամ ռուսական հեռուստաընկերությամբ ինչ-որ մեկը պատմեր, որ հայերը չէին ուզում 1992 թվականին կռվել Արցախի համար, նրանց ստիպում էին: Դա սուտ կլիներ ու դա կլիներ հակահայկական հռետորաբանություն: Ոչ մի նման բան ռուսական լրատվամիջոցներում չկա, իսկ Հայաստանի իշխանություններին ուղղված քննադատություն իսկապես կա, որը ՀՀ իշխանությունները համահավասարեցնում են հակահայկական հռետորաբանության հետ: Հռոմի ստատուտի ընդունումից ու ՀԱՊԿ-ի վերաբերյալ դեռեւս ոչ վերջնական որոշումից բացի, այնքան էլ հասկանալի չէր նաեւ «Զվարթնոց» օդանավակայանից ռուս սահմանապահների դուրսբերումը: Ես չեմ կարծում, թե սա արժե որակել որպես հակառուսական գործողություն: Ռուս սահմանապահներն այնտեղ էին գտնվում երկու կողմերի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ, կողմերից մեկը որոշեց այդ որոշումը վերանայել: Դա նշանակում է, որ մեր սահմանապահներն իրենց ուժերը չեն ծախսի այն գործունեությունը ծավալելու համար, ինն իրենց փոխարեն կանեն հայ սահմանապահները. ես այստեղ ոչ մի հակառուսականություն չեմ տեսնում: Երբ պաշտոնական Երեւանը կայացնում է որոշում, որն իսկապես շոշափում է Ռուսաստանի շահը, օրինակ՝ ԵՄ-ին անդամակցելու մասին, Ռուսաստանից հնչում են բավականին կոշտ ու ուղիղ գնահատականներ: Իսկ ուղղակի կռվել, որովհետեւ մեզ դուր չի գալիս, թե ինչ են մեր մասին խոսում հայկական լրատվամիջոցները՝ ինչո՞ւ, ի՞նչ հավելյալ արժեք է դա հաղորդում մեր դիվանագիտական ջանքերին: Ի դեպ, եթե ուշադրություն դարձնեք, երբ ռուս-ադրբեջանական հարաբերությունների սրացում եղավ, ռուսական ԱԳՆ-ն նույնպես շատ զգույշ էր արտահայտվում: Ասվում էր, որ մենք հետաքրքրված ենք բարիդրացիական հարաբերությունների պահպանմամբ Ադրբեջանի հետ, ենթադրում ենք, որ դա համապատասխանում է երկու երկրների շահերին: Եվ, այո, այսպիսի ոճ ունի ռուսական դիվանագիտությունը: Բացի այդ, ես կարծում եմ, որ Հայաստանի իշխանությունները Ռուսաստանի դեմ ոչ մի անդառնալի քայլ դեռեւս չեն գործել:

Շարունակելի

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՇԱՏ ԱՎԵԼԻ ՎԱՏ ԲԱՆԵՐ ԵՆ ԱՍԵԼ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Նիկոլ Փաշինյանը երեկ տեղեկացրեց, որ ՔՊ-ն ընդունել է էթիկայի կանոնագիրք, որ այլեւս չհայհոյի, չվիրավորի, ատելության քարոզ չանի, չթիրախավորի հանրության տարբեր խմբերի եւ բարեվարքության կանոնները պահպանի: Հասարակությանը սեւերի ու սպիտակների բաժանած, «դոմփել» տերմինը շրջանառած, ընդդիմադիրներին «շինող» ու ասֆալտին փռող, պադվալներ լցնող պետության ղեկավարն ասում է, որ այսուհետ համարժեք պատասխան չի տալու իրեն վիրավորողներին ու հայհոյողներին, եւ խնդրում է դա թուլություն չհամարել: Մի քանի հարց ենք տվել ՔՊ-ական պատգամավոր **Լուսինե Բաղալյանին**:

- Ավելի քան 7 տարի իշխանությունը հայհոյելուց, վիրավորելուց, բարեվարքության բոլոր նորմերը խախտելուց հետո հանկարծ որոշել է էթիկայի կանոնագիրք ընդունել եւ իր ներսից՝ դա խախտողներին պատասխանատվության ենթարկել: Շատերը զարմացած են՝ ինչո՞ւ:

- Հատկապես ուսումնասիրելով կանոնագիրքը, կարող եմ ասել, որ ես միշտ եմ եղել էթիկայի սահմաններում, եւ կարծում եմ, որ պատգամավորների, քաղաքական թիմի մեծ մասն էթիկայի սահմաններից դուրս չի եկել, բայց որ մեզ միշտ ասում են՝ դուք հայհոյեցիք, թիրախավորեցիք, սա արեցիք, այն համեմատության մեջ, որ մեզ հայհոյել են, թիրախավորել են ու մնացած բոլոր բաները, ուղղակի անհնար է համեմատել, պարզապես անհնար:

- Երեւի պետության ղեկավարն էլ դուրս չի եկել այդ սահմաններից:

- Չեմ ժխտում, այո, դեպքեր եղել են, տհաճ դեպքեր են եղել, բարձր պաշտոնյաների կողմից արտահայտությունների կամ գործողությունների տեսքով, եզակի՝ ոչ հաճախ, բայց, այո, եղել են դեպքեր:

- Սեւերի ու սպիտակների բաժանելուց, ասֆալտին փռելու սպառնալիքներից սկսած, վերջացրած «դոմփելու», «շինելու» մասին արտահայտություններով, Նիկոլ Փաշինյանն իշխանության գալու առաջին օրվանից դրանով է զբաղվել:

- Բայց հենց վարչապետն այսօր իր այս քայլով եւ իր գրառմամբ, ինչպես նաեւ՝ էթիկայի կանոնագիրքը համատեղ մշակելով, ուզում է ցույց տալ եւ ներողություն խնդրել այն բոլոր սխալների համար, որոնք արվել են, եւ այսուհետեւ կանխել հատկապես պաշտոնյաների կողմից նման վարքագիծը: Կարծում եմ, որ սա ողջունելի է:

- Այսինքն, 8 տարի պահանջվեց՝ հասկանալու համար, որ այդ ամենը վատ բան է, թե՞ գուցե սա պարզապես նախընտրական հնարք է:

- Կարծում եմ՝ նախընտրականի հետ որեւէ աղերս չունի, առավել եւս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ցավոք սրտի, ժողովրդին դուր է գալիս եւ վիրավորելը, եւ էթիկայի կանոնները խախտելը: Փորձը ցույց է տալիս, հատկապես սոցիալական մեդիան թերթելով դու տեսնում ես՝ այնպես չի, որ ժողովրդի ստվար հատվածին դուր է գալիս հայհոյելն ու վիրավորելը, ուստի ես կարծում եմ, որ սա նախընտրականի հետ կապ չունի, պարզապես ինչ-որ մի օր այդ քայլը պետք էր անել, անհանդուրժող պայքար պետք էր ցուցաբերել զազրախոսությունների, ատելության տարածման եւ այլնի հարցում: Այդ պարտականությունն էլ հերթական անգամ մենք վերցրել ենք մեզ վրա:

- Բայց դուք եք հայհոյանքի, պառակտման եւ այլնի ավանդույթները դրել Հայաստանում...

- Ո՞վ է ասում, շատ ավելի վատ բաներ են ասել մնացած ղեկավարները:

- Մի օրինակ ասեք:

- Շատ են, եւ ղեկավարները, եւ քաղաքական թիմերը, ու այս մանիպուլյացիան ինձ դուր չի գալիս, թե այս իշխանությունը բերեց հայհոյանքը: Չկա նման բան, մի քիչ ավելի ուշադիր ուսումնասիրեք եւ կտեսնեք, որ նման բան չի եղել: Ուղղակի մեր իշխանությունը մի սխալ, ավելի ճիշտ՝ սխալ չէ... քննարկելի է սա, տվեց ազատություն, թողեց ազատ՝ մարդկանց արտահայտման համար, ու ստեղծվեց քաոս:

- Իշխանականները, այո, ունեն ազատություն, բայց հանկարծ մեկը հանդգնի եւ իշխանականների հասցեին մի թեթեւ մեկնաբանություն անի Ֆեյսբուքում, անմիջապես բռնում են ու բանտարկում:

- Չկա նման բան, 8 տարի է՝ իմ հասցեին ինչ սուտ ասես, գրում են եւ ինչ ասես, անում են, բայց որեւէ մեկը չի հայտնվել ճաղերի ետեւում:

- Դուք երեւի շատ կարկառուն չեք:

- Ամեն դեպքում, ես հուսով եմ, որ մի օր բոլորը պատասխան են տալու իրենց ասածների համար: Մենք այդ պատասխանատվությունը վերցրել ենք մեզ վրա, ընդունել ենք կանոնագիրք, որով ասում ենք՝ եթե սխալ բան անենք կամ ասենք, պիտի պատասխանատվություն կրել:

- Կհաջողվի՞, մի քիչ դժվար է պատկերացնել ձեր իշխանությանն ու բարեվարքության կանոնները: Մարդիկ ձեզ եւ հայհոյանքն ու վիրավորանքը որպես հոմանիշ են ընկալում:

- Վստահ եմ՝ կկարողանանք, եւ մարդիկ էլ նման կարծիք չունեն մեր մասին, այդպես կարծում են մի խումբ մարդիկ, թող շարունակեն այդպես կարծել, մենք այնպիսի անհնարին բաներ ենք կարողացել անել: Սա, որ մեր պարտականությունն է՝ որպես հայ, որպես քրիստոնյա, որպես մշակութային արժեք ներկայացնող երկիր, մենք սա կանենք հեշտությամբ, մնում է ժողովուրդն էլ հետեւի մեր օրինակին: Մենք կստեղծենք տգեղ եւ տհաճ խոսույթից դուրս մշակույթը եւ այն այսօրվանից պիտի սկսենք:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԴԱԺԱՆ ԵՆ, ՔԱՆ ՄԵՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Օրեր առաջ Միքայել եւ Բագրատ սրբազանները կալանավայրից հայտարարություններ տարածեցին՝ ուղղված հանրությանը, Վեհափառ հայրապետին, իրենց եկեղեցական եղբայրներին: Մի հայտարարության մեջ, որով անդրադարձել էին 10 սրբազանների դավաճանությանը, ասված էր.

«ա) Դատապարտում ենք հերձված ստեղծելու այս փորձը եւ ընթացքը՝ դավադիր, գաղտագողի վարքով,

բ) դատապարտում ենք աշխարհիկ իշխանություններին, այն էլ՝ հայրենադավ եւ դավաճան, ներքաշելու ներեկեղեցական հարցերի լուծման մեջ՝ գործիք դառնալով նրանց ձեռքին,

գ) մեր կոչն է տիրադավերին՝ վերադառնալ կանոնական դաշտ եւ իրենց հուզող հարցերը բարձրացնել ներեկեղեցական տիրույթում եւ ատյաններում,

դ) դիմում ենք Վեհափառ Հայրապետին՝ անհրաժեշտ ենք նկատում հրավիրել եպիսկոպոսաց ժողով՝ քննարկելու առկա հարցերը եւ պատրաստելու Ազգային եկեղեցական ժողովի օրակարգը: Միեւնույն ժամանակ պնդելով՝ ապահովել ապօրինի ազատազրկված երեք սրբազաններիս մասնակցությունը:

Աղոթում ենք, հույս եւ համոզում ենք հայտնում, որ Վեհափառ Հայրապետն ամուր եւ անսասան կմնա, եւ որ Սուրբ Հոգու առաջնորդությամբ մեր Սուրբ եկեղեցին կհաղթահարի չարի այս փորձությունը եւս»:

«Բայց այս ամենից ավելի հաղթական ենք դուրս գալիս նրա շնորհիվ, ով մեզ սիրեց, որովհետեւ համոզված եմ, որ ոչ մահը, ոչ կյանքը, ոչ հրեշտակները, ոչ իշխանությունները, ոչ ներկա եւ ոչ գալիք բաները, ոչ զորությունները, ոչ բարձրությունը, ոչ խորությունը, ոչ էլ որեւէ ուրիշ արարած չի կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որ մեր Տեր Քրիստոս Հիսուսով է (Հռոմ. ը- 37:39)»:

Հայտարարություն հղեց նաեւ Արագածոտնի թեմի կալանավորված առաջնորդ Մկրտիչ սրբազանը: Կիրակի օրը Սուրբ Սարգիս եկեղեցում տեղի ունեցավ շրջիկ պատարագասերների հերթական ակցիան՝ քաղաքական պատարագը, որն ուղեկցվեց ծափողջույններով, Վեհափառի անունը բարձրաձայնելու համար բերման ենթարկելով, եւ, ինչպես մեր թղթակիցն էր նկատել, գրեթե ոչ մի մոմ չվառվեց: Մենք զրուցել ենք Սաղմոսավանքի հոգեւոր սպասավոր **Տեր Փառեն քահանա Առաքելյանի** հետ:

- Սրբազանները բանտից հանդես եկան հստակ հայտարարությամբ, հստակ պահանջներով: Ի՞նչ կարծիք ունեք այդ հայտարարության մասին:

- Իհարկե, կիսում եմ սրբազանների հայտարարությունը, Մկրտիչ սրբազանի հայտարարությունը նույնպես կիսում եմ:

- Այսինքն՝ Դուք նույնպես այն կարծիքին եք, որ եկեղեցին պետք է մաքրվի դավաճաններից:

- Սրբազանների մտահոգությունը ես կիսում եմ ամբողջությամբ, նրանց կարծիքը նույնպես կիսում եմ, բայց խնդրում եմ՝ նկատի ունեցեք, որ ես պարզ քահանա եմ: Ես կարող եմ կարծիք ունենալ, սակայն պատշաճ չէ եպիսկոպոսների վերաբերյալ խոսք ասելը: Մենք ամեն բան ընդունում ենք ի գիտություն, կիսում եմ սրբազանների հայտարարությունը, նրանք՝ երեքն էլ մեր հայրերն են, Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ զավակներ, բայց ինչ վերաբերում է մնացած սրբազանների մասին գնահատականներին, ապա ես զերծ կմնամ կարծիք արտահայտելուց:

- Նրանցից ի՞նչ սրբազան, պարզամիտ, բամբասկոտ դավաճաններ են, որպես Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ՝ չեմ խորշի այդ գնահատականները տալուց: Նրանցից մեկն էլ երեկ հարցազրույց էր տվել եւ պնդել, որ Արշակ սրբազանը տեւական ժամանակ պայքարել է Վեհափառի դեմ եւ այլն: Ինչպե՞ս կարելի է նմաններին համարել հոգեւորական, այն էլ՝ բարձրաստիճան:

- Դուք, վստահաբար, ինձ ճանաչում եք եւ գիտեք իմ կարծիքը, սակայն ես այդ գնահատականներից զերծ կմնամ եւ չեմ հատի կարմիր գծեր: Վստահ եմ՝ գիտեք, որ տեղի է ունենալու եպիսկոպոսաց ժողով: Այդ ժամանակ սրբազան հայրերը հանդես կգան հայտարարությամբ, եւ, ըստ դրա, կշարժվենք առաջ: Առայժմ համեստորեն կլռենք եւ գնահատականներ չենք տա: Սրբազանների հայտարարության մեջ էլ խոսք կար դարձի ճանապարհի մասին: Պատմությունը բոլորին կտա իր արժանի գնահատականը: Ոչ ոք չի կարողացել պատմությունից խուսափել, իսկ պատմության գնահատականները շատ ավելի դաժան են, քան մեր գնահատականները:

- Շատերը կարծում են, որ եպիսկոպոսներին ստիպել են, շանտաժի են ենթարկել՝ միանալու այդ հայտարարությանը:

- Ես կարող եմ միայն ենթադրել, սակայն հստակ ոչինչ չեմ կարող ասել, չունեմ տեղեկություններ:

- Ձեր գործունեության ընթացքում երբեւիցե տեսե՞լ էիք նման բան, որ եկեղեցում ծափահարեին, սուլեին, բղավեին եւ պաշտեին ինչ-որ մեկին, ոչ թե Հիսուս Քրիստոսին: Սա ի՞նչ երեւույթ է:

- Եկեղեցում աղմուկ-աղաղակ չի կարելի, եկեղեցում միայն Աստծուն են պաշտում: Ծափ տվողներին պետք է հարցնել, թե ինչու են նման բան անում, դա անընդունելի է: Չի կարելի նման բան անել: Անկախ այն բանից, թե ով է անձը, պետք է մտնել եկեղեցի լուռ, խոնարհ, աղոթել, հաղորդություն ստանալ եւ եկեղեցուց դուրս գալ:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՈՒՐՈ ԼԵՆՆԱԿԱՆՍԿԻՆ, ՁԱՊԻ ՔՐՈՋ ՈՐԴԻՆ ՈՒ 6 ԳՈՂԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ, ՍՐԲԱԶԱՆՆԵՐԸ՝ ՆՍՏԱԾ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

2022 թվականի ամռանը ԱԱԾ-ն աղմուկով բերման ենթարկեց գյումրեցի օրենքով գող Սուրոյին եւ նրա հետ փոխկապակցված մի խումբ անձանց: Քննչական կոմիտեն այդ ժամանակ ծավալուն հաղորդագրություն տարածեց, որտեղ ներկայացված էին Սուրոյի ղեկավարած խմբավորման գործողությունները: Այսպիսով. «Պաշի տղա Սուրո Լեննականսկի» անունով օրենքով գողը 2021 թվականին տեղի ունեցած ինչ-որ ծեծկռտուքի հետ կապված՝ «գործ» է լուծել՝ գողականով, ապա ասել, որ նման հարցերը լուծելու են իրենց «օրենքներով», եւ հրահանգել է դա փոխանցել մյուսներին. «...հանձնարարել է բոլորին փոխանցել, որ խուլիգանություն կատարող անձինք պատասխան են տալու քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց, իսկ խմբավորման անդամները կատարել են վերջինիս պահանջը՝ այդկերպ մասնակցելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը եւ ներգրավվելով դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը»:

Բացի սրանից, ըստ ՔԿ-ի, «Պաշի տղա Սուրո Լեննականսկին» իր մարդկանց միջոցով Հայաստանի տարբեր բանտերից հավաքագրել է գումարներ, որից 5 հազար ԱՄՆ դոլարը փոխանցվել է «Ձապի եգան Արտյոմ Լեննականսկի» մականվամբ անձին՝ քրեակատարողական հիմնարկից ազատվելու կապակցությամբ: «Այնուհետեւ, 2022 թվականի մարտի 7-ին «Պաշի տղա Սուրո Լեննականսկին» հավաքագրված գումարների շարժի «հաշվապահությունը վարող» Ռաֆիկ Իգիթյանին եւ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մեկ այլ անդամի հրահանգել է, հանցավոր աշխարհում ձեւավորված ավանդույթի համաձայն, հոր մահվան կապակցությամբ 10 հազար ԱՄՆ դոլար գումար փոխանցել «Ձապի եգան Արտյոմ Լեննականսկի» մականվամբ հայտնի անձին: Իգիթյանը հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատել որդու՝ Աշոտ Իգիթյանի հետ, հրահանգել գումարների պահման թաքստոցից վերցնել 10 հազար ԱՄՆ դոլար եւ տեղափոխել իր մատնանշած վայրը: Աշոտ Իգիթյանը, մասնակցելով նշված խմբավորմանը, թաքստոցից վերցրել է գումարը, տեղափոխել է մատնանշված վայրն ու փոխանցել հորը, որից հետո վերջինս եւ Ցոլակ Գեւորգյանը «Ձապի եգան Արտյոմ Լեննականսկի» մականվամբ հայտնի անձին են փոխանցել նշված գումարը»,-նշված է ՔԿ-ի տարածած հայտարարության մեջ:

Այս քրեական գործում 8 մեղադրյալ կա, որոնք հարում են քրեական ենթամշակութային խմբավորմանը: Մեղադրյալների թվում են՝ Գյումրիում կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, ճանաչված գործարար Ռաֆիկ Իգիթյանը՝ «Իգիթի Ռոն», նրա որդի Աշոտ Իգիթյանը եւ Վահան Տեր-Պողոսյանը, «Պաշի տղա Սուրո Լեննականսկի» մականվամբ հայտնի Սուրեն Ավետիսյանը, «Ձապի եգան Արտյոմ Լեննականսկին»՝ Արտյոմ Ղազարյանը, որն օրենքով գող Անդրանիկ Սողոյանի՝ Ձապ Լեննականսկիի քրոջ որդին է, նաեւ՝ Ցոլակ Գեւորգյանը՝ «Տեքստիլի Ցոլոյ»-ը, Կարեն Վարոսյանը՝ «Աֆիշի Կարեն»-ը: Գործը 2022-ին հասել է Շիրակի մարզի դատարան:

Ի սկզբանե մեղադրյալները կալանավորված են եղել, բայց ժամանակի ընթացքում ազատ են արձակվել: Մասնավորապես, խմբավորման պարագլուխ «Պաշի տղա Սուրո Լեննականսկիի» ազատ արձակման ճանապարհին այսպես է անցել. «Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Ս. Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոխվել է, եւ նրա նկատմամբ համակցված կիրառվել են այլընտրանքային խափանման միջոցներ. տնային կալանք՝ 3 ամիս ժամկետով, եւ գրավ՝ 40 միլիոն դրամի չափով: Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի օգոստոսի 21-ի եւ 2023 թվականի նոյեմբերի 13-ի որոշումներով Ս. Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված տնային կալանքը երկարաձգվել է 3 ամիս ժամկետով, իսկ 40 միլիոն ՀՀ դրամի չափով գրավը թողնվել է անփոփոխ: Առաջին ատյանի դատարանի 2024 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված տնային կալանքը փոխվել է, եւ նրա նկատմամբ կիրառվել է վարչական հսկողություն խափանման միջոցը, իսկ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառված 40 միլիոն գրավը թողնվել է անփոփոխ»:

Ավետիսյանի խափանման միջոցը փոխելու համար դատախազությունը բողոքարկել է Վերաքննիչ դատարան, մերժում ստանալով՝ հասել է Վճռաբեկ դատարան, որը 20 օր առաջ վճռել է բողոքը վարույթ չընդունել: Ի դեպ, հատուկ վերանայման բողոքը ներկայացրել էր գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ինչը բացառիկ դեպքերում է լինում:

Այսինքն, 3 տարի է՝ օրենքով գողերին առնչվող այս գործն առաջին ատյանի դատարանում է՝ քննվում է, բայց դատավճիռ չկա: Ավետիսյանի պաշտպան **Արամայիս Հայրապետյանը** «Հրապարակ»-ին ասաց՝ այս գործով 5 դատավոր է փոխվել, նոր՝ 6-րդ դատավորը զրոյից սկսել է դատաքննությունը: Նա հաստատեց, որ այս գործով անցնող բոլոր մեղադրյալներն այժմ ազատության մեջ են: Նրանց ազատ արձակման որոշումների դեմ Գլխավոր դատախազությունը բողոքներ է տարել վերադաս ատյան:

Դե, գողերն ու մականունավոր տղերքը հո սրբազաններ չե՞ն կամ հայտնի գործարար, որ մի խոսքի համար բանտ նետվեն ու ամիսներով պահվեն:

ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՔԱՅԼԵԼ, ՑԱՎԵՐ ՈՒՆԻ, ԴԵՂՈՐԱՅՔ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՄԻԱՅՆ ԹԵՅ ՈՒ ՀԱՑ Է ՈՒՏՈՒՄ



Արա ԱԼՈՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցը Բաքվի բանտում ապօրինի կալանքի տակ գտնվող լիբանանահայ Վիգեն Էուլջեքյանի կինը՝ **Լինդա Էուլջեքյանն** է:

- Նոյեմբերի 10-ին լրացավ 5 տարին, ինչ Վիգենն Ադրբեջանում է գտնվում: Այս տառապալից տարիների ընթացքում նա 3 անգամ հացադուլ է հայտարարել՝ վտանգելով առողջությունն ու կյանքը՝ արդարության հուսահատ պահանջով: Վստահ եմ՝ իր պայքարով նաեւ ձեզ է ուժ տալիս:

- Երեք տարի առաջ ես ներկայացա հեռուստատեսությամբ՝ ամուսնուս խնդրանքով: Ես երկու տարի լռել էի, նույնիսկ այն բանից հետո, երբ ամուսնուս գործընկերուհին՝ ընտանիքի ընկերուհի Մարալը, ազատ արձակվեց Ադրբեջանում բանտից: Նա ինձ պատմեց ամենասարսափելի մանրամասներն այն մասին, թե ինչ են կրել ինքն ու ամուսինս բանտում կալանքի ընթացքում: Նա երկու տարի հոգեբանական բուժում է ստացել, որի ընթացքում ես նաեւ խոր դեպրեսիայի մեջ եմ ընկել: Հիմա ես բժշկի կողմից նշանակված հանգստացնող դեղամիջոցներ եմ ընդունում: Ես կարող եմ պատկերացնել այն ցավը, որը կրեց ամուսինս, այդ պատճառով այդքան քաշ կորցրի: Ես զգում եմ, որ ապրում եմ նաեւ բանտից դուրս գտնվող բանտում:

- Վերջին անգամ ե՞րբ եք կապ հաստատել նրա հետ: Գիտենք, որ առողջական վիճակը բանտում վերջին օրերին կտրուկ վատացել է. չի կարողանում քայլել, անվասայլակի ու դեղորայքի կարիք ունի, որը չի տրամադրվում: Այս հարցում դրական փոփոխություն կա՞:

- Ամսի 16-ին ես զանգ ստացա ամուսնուցս, որին սպասում էի գրեթե 45 օր: Վերջին անգամ, երբ մենք խոսեցինք, նա հացադուլ էր անում: Մենք չկարողացանք պարզել՝ դադարեցրե՞լ է, թե՞ ոչ: Ես սպասում էի այս զանգին՝ նրա վիճակը ստուգելու համար: Ոչ ոք չգիտի, թե որքան սրտխառնոց էինք զգում, հատկապես, երբ նրանից լսեցի, որ չի կարողանում քայլել, ցավեր ունի, դեղորայք չի ընդունում եւ լավ չի ուտում՝ միայն թեյ ու հաց: Բոլորը հարցնում էին, թե ինչպես եմ համարձակվում բարձրաձայնել: Պետք է լռեմ եւ լա՞ց լինեմ բարձիս վրա, թե՞ նայեմ աշխարհին ու ասեմ. «Այս բանտարկյալները մեր կարիքն ունեն: Մենք նրանց ձայնն ենք»:

- Վիգենի ներկայացուցիչները նամակ են գրել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին՝ խնդրելով միջնորդել, որ նա ազատ արձակվի բանտից: Ի՞նչ ներկայացուցիչների մասին է խոսքը, ովքե՞ր են, եւ ի՞նչ արձագանք կա նամակի հետ կապված:

- Մի քանի կազմակերպություններ, այդ թվում՝ ընտանիքի փաստաբան Լուսիանա Մինասյանը, նամակներ են ուղարկել միջազգային հանրությանը, նախագահ Թրամփին եւ նախագահ Իլհամ Ալիեւին: Մինչ օրս ես չեմ լսել գործով որեւէ առաջընթացի մասին, մասնավորապես՝ առողջական պատճառներով նրան ազատ արձակելու պահանջի վերաբերյալ:

- Օրեր առաջ էլ Վիգենի փաստաբաններից Լուսիանա Մինասյանը մեզ հետ զրույցում հաստատեց, որ ինքն ու իր իսպանացի գործընկերը դիմում են ներկայացրել ՄԱԿ-ին՝ Վիգենի անհապաղ ազատ արձակման պահանջով: ՄԱԿ-ից որեւէ կերպ արձագանքե՞լ են դիմումին:

- Շնորհակալության խոսքերը բավարար չեն Լուսիանայի համար: Լուսիանան հետեւում է գործին եւ մի քանի իսպանացի փաստաբանների հետ միասին փորձում է ապացուցել ամուսնուս անմեղությունը եւ ճնշում է գործադրում նրա ազատ արձակման համար՝ առողջական վիճակի պատճառով: Մենք սպասում ենք պատասխանի:

- Քանի որ Վիգենը ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Լիբանանի քաղաքացի է, արդյո՞ք դիմել եք նաեւ Լիբանանի կառավարությանը, լիբանանցի ազդեցիկ գործիչներին, որպեսզի նրանք եւս ջանքեր գործադրեն՝ Ձեր ամուսնուն ազատ արձակելու ուղղությամբ:

- Վերջին չորս տարիների ընթացքում մենք նրա գործը Լիբանանի արտաքին գործերի նախարարությունում ներկայացրել ենք պատգամավորներ Պաուլա Յակուբյանի եւ Հակոբ Բագրադունյանի խնդրանքով, քանի որ նրանք ներկայացնում են հայ համայնքը: Լիբանանի կառավարությունը որեւէ պատասխան չի ստացել՝ Բեյրութում Ադրբեջանի հյուպատոսին մի քանի նամակ ուղարկելուց հետո:

- Ձեր ընտանիքը Բեյրութում է բնակվում: Որքան գիտեմ, փոքրիկ խանութ ունեք, որով հոգում եք ընտանիքի կարիքները: Հայաստանից պաշտոնապես որեւէ աջակցություն ստացե՞լ եք:

- Բեյրութի ներկայիս տնտեսական իրավիճակից ի վեր իմ ընտանիքը բազմաթիվ դժվարությունների է բախվել: Ես դժվար ժամանակներ եմ անցել. որտեղ էլ որ աշխատեմ, աշխատավարձը չնչին է եւ անբավարար: Կենդանիների հանդեպ իմ սիրո պատճառով որոշեցի Բուրջ Համուդում կենդանիների խանութ բացել՝ կենդանիների համար կեր վաճառելու համար, որպեսզի երեխաներս եւ ես կարողանանք ապրուստ վաստակել եւ շարունակել մեր կյանքը: Մենք սպասում ենք, որ բոլորը հետ գան մեզ մոտ: Իհարկե, մեր երկրում իրավիճակը սպառնում է պատերազմով, ուստի եկամուտս շատ քիչ է: Շնորհակալություն տիկին Անահիտ Մանասյանին՝ Հայաստանի իրավապաշտպանին, որը ՀՀ կառավարության եւ փաստաբան Սիրանուշ Սահակյանի հետ միասին միջոցներ է հատկացնում՝ մեզ բնակարանով ապահովելու համար:

ԷԹԻԿԱ

ՄԻ ՀԱՎԱՏԱՑԵՔ ԿՈԿՈՐԴԻԼՈՍԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԱՂՎԵՍԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԻՆ, ԹԵ «ԷԼ ՎԱՆՔԻ ՀԱՎԵՐԸ ՉԵՄ ՈՒՏԻ»

Երեկ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ զարմացրեց հայ հասարակությանը: Թեեւ սա այն եզակի դեպքերից է, երբ զարմանքը կարող ենք նաեւ դրական իմաստով օգտագործել. նա հայտարարեց, որ ՔՊ կուսակցությունն էթիկայի կանոնագիրք է ընդունել, ինչը նշանակում է, որ այլեւս հայհոյախոսությունը, մարդկանց թիրախավորումը, վիրավորելը պետք է բացառվեն: Գրում է. «Այնպես որ, երբ հայհոյանքին հայհոյանքով, վիրավորանքին վիրավորանքով չպատասխանենք, խնդրում ենք դա չընկալել որպես թուլություն կամ վախվորածություն, այլ՝ նվիրվածություն մեր իսկ ընդունած էթիկայի կանոնագրքին»: Այսինքն, ներողություն է խնդրում չհայհոյելու համար, ասում է, որ կառավարման 8-րդ տարում վերջապես որոշել են բարեկիրթ լինել եւ հանրային քաղաքական կյանքը կառուցել «փոխադարձ հարգանքի, բարեկրթության, թափանցիկության ու հաշվետվողականության վրա»:

Կարող էինք անգամ ուրախանալ, եթե այսքան տխուր ու զավեշտալի չլիներ մեր վիճակը: Ուրեմն 8 տարի պառակտել, սադրել, հայհոյել, մարդկանց իրար դեմ են թշնամացրել եւ 8-րդ տարում նոր-նոր հասկացել են այն տարրական բաները, որոնց մասին մենք խոսում էինք 2018-ի մայիսից սկսած: Խառնակչություն են արել, ընտանիքներ ու ընկերներ են բաժանել իրարից, մասնագիտական խմբերի ու անհատ մարդկանց են թիրախավորել, օրերով, ամիսներով, տարիներով հալածել են, դատարան ու բերդ են գցել, վարկաբեկել են, եւ՝ օ, հրաշք, հանկարծ հիշել են, որ բարեկրթությունն ու մարդկային հարաբերություններում փոխադարձ հարգանքը լավ բան են:

Ինչ է սա՝ նախընտրական հումոր, քարոզչական հնամոք, սեփական սխալները գիտակցելու նշանները, թե՞ ուղղակի հասկացել են, որ հասարակությունը սկսել է տոտալ մերժել ամեն ինչ եւ ամենուր պառակտելու, հրահրելու, թշնամանք ու ատելություն տարածելու իրենց վարքագիծը: Հասկացել են, որ մարդիկ ուղղակի նողկում են իրենց խոսույթից ու պահվածքից, եւ եկել է իրենց իշխանության վերջը:

Բայց պետք չէ հավատալ կոկորդիլոսի արցունքներին եւ աղվեսի հավաստիացումներին, թե «այլեւս վանքի հավերը չեմ ուտելու»: Մանավանդ՝ եկեղեցու դեմ սկսված ու թափ հավաքող իշխանական արշավը բոլորովին չի խոսում այն մասին, որ իրենք հասկացել են իրենց պատասխանատվությունը եւ որոշել են վերանայել իրենց վարքագիծը: Ընդամենը մի քանի օր առաջ են Հայաստանի ամենամեծ ու ամենաազգային կառույցը պառակտելուն ուղղված գործողություններ արել: Ընդամենը 2 օր առաջ են ՔՊ-ի կարկառուն դեմքերը լրատվամիջոցներին ու լրագրողներին թիրախավորել, այդ թվում՝ «Հրապարակը», ֆեյսբուքյան հերթական արշավը նախաձեռնել, ընդամենը օրեր առաջ են խոսքի, քննադատության համար մարդկանց կալանավորել ու դատել:

Եվ վերջապես, ինչ է նշանակում՝ «եթե հայհոյանքին հայհոյանքով, վիրավորանքին վիրավորանքով չպատասխանենք, խնդրում ենք դա չընկալել որպես թուլություն կամ վախվորածություն»: Այս հիվանդ միտքը միայն մի դեպքում կարող է մարդու գլխում ծագել, եթե նա չգիտի, թե ինչ են իրական ուժն ու համարձակությունը, եւ կարծում է, թե երբ իրենք իշխանական լծակներն ու ֆեյքերին օգտագործելով հայհոյում եւ վիրավորում են իրենց քննադատող քաղաքացիներին, դա ուժի եւ դուխի դրսեւորում է:

Սրանք անգամ չեն հասկացել, թե երկիրն ինչ վիճակի են հասցրել այս 8 տարում, եւ ինչքան մեղմ են այդ ամենի դիմաց իրենց ուղղված քննադատությունները: Չեն գիտակցել, որ ՀՀ քաղաքացին իրավունք ունի իրենց եւ քննադատելու, եւ հայհոյելու, իսկ իշխանությունը դրա իրավունքը չունի, եւ հայհոյելը բացարձակապես ուժի ու համարձակության դրսեւորում չէ:

Հասարակության կողմից դա ազնիվ զայրույթի, հիասթափության, հուսահատության դրսեւորում է, իսկ իրենց կողմից՝ իրավունքների չարաշահում, Սահմանադրության ոտնահարում, ընտրողի ու հանրության հանդեպ անհարգալից վերաբերմունք եւ այլն:

Ու մի բան էլ. փաստորեն, բոլոր կառույցներում բարեվարքության կանոնագրքեր պահանջող, ամբողջ օրը այդ թեմայով խորհրդաժողովներ ու սեմինարներ անող իշխանությունը՝ կառավարող կուսակցության գոյության 10 եւ ավելի տարիների ընթացքում չի «ֆայմել» կանոնագիրք ունենալ եւ դա նոր-նոր է անում: Երեւի սպասենք մի 10 տարի էլ, որ յուրացնեն երկիր կառավարելու տարրական այբուբենը եւ իրենց մյուս սխալներն էլ սկսեն գիտակցել:

Սրանք Հայաստանը, փաստորեն, որբի գլուխ են համարել, որի վրա կարելի է դալլաքություն սովորել, փորձադաշտ են դիտել, որին վնասելու եւ որը վտանգելու գնով գիտելիքներ են ձեռք բերում: Իսկ իրենց սխալների, վրիպումների, հանցավոր անգործության եւ գործողությունների պատճառով երկիրը դեպի անդունդն է գնում:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԻ ԿՈՌՈՒՄՊԱՆԱՐ ԿԱՄ՝ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՔՊ-Ի

Առավոտ կանուխ մտա Նիկոլի ֆեյսբուքյան էջը, որ իմանամ, թե առաջիկա կիրակի որ եկեղեցում է մասնակցելու սուրբ պատարագի: Այդպիսի գրառում չկար, ոչ էլ սրտիկ կար: Մի բան եղած չլինի՞ էդ մարդուն՝ անցավ մտքովս, բայց եւ քիչ անց տեսա, որ թարմ գրառում է արել: Նշանակում է՝ դեռ ողջ է եւ գուցե՝ առողջ: Պարզվեց՝ ՔՊ վարչությունով կուսակցության էթիկայի կանոնագիրք են ընդունել, եւ այդ մասին էր ծանուցում Նիկոլը: Կարդացի գրառումը, որ սկսվում էր «Սիրելի հայրենակիցներ» չարչրկված բառերով: Դա ՔՊ վարչության մտավոր սնանկությունը փաստող թղթի, որի անունը դրել են «կանոնագիրք», նիկոլական հպանցիկ մեկնաբանությունն էր, որ, ինչպես Նիկոլի ցանկացած մեկնաբանություն, լրացուցիչ մեկնաբանության կարիք էր զգում:

Խնդրեմ, հենց առաջին նախադասությունից հարցեր են ծնվում: Գրել է. «Սիրելի հայրենակիցներ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որպես կառավարող ուժ, հատուկ պատասխանատվություն է զգում երկրում քաղաքական միջավայրի, մթնոլորտի, կուլտուրայի զարգացման գործում»: Եթե այս թուղթն ընդունված լիներ 2018, 2019 թվերին, գուցե Փաշինյանի վերոբերյալ նախադասությունն այսքան ծիծաղելի չլիներ: Իշխանության գալուց 7-8 տարի անց այս մարդիկ հանկարծ «պատասխանատվություն են զգացել» երկրում քաղաքական միջավայրի, մթնոլորտի, կուլտուրայի զարգացման գործում ու այդ մասին հայտարարել «սիրելի հայրենակիցներին»: Նիկոլ, էդ «սիրելի հայրենակիցները» մտավոր հետամնացներ չէին եւ վաղուց գիտեին, որ իշխանությունները, բոլոր ժամանակներում եւ բոլոր երկրներում, առնվազն «պատասխանատվություն են կրում» քաղաքական միջավայրի, մթնոլորտի, կուլտուրայի զարգացման համար: Ստացվում է, սակայն, որ դուք նոր-նոր եք իմացել այդ մասին ու ընդամենը «պատասխանատվություն եք զգում»: Նկատեցի՞ք «պատասխանատվություն կրելու» եւ «պատասխանատվություն զգալու» տարբերությունը: Եթե չնկատեցիք, պարոն Փաշինյան, ապա կարող եմ ավելի առարկայորեն ներկայացնել դրանց տարբերությունը: Դիցուք՝ «սիրելի հայրենակիցների» տանձին չէ, թե դուք ինչ եք զգում… «Սիրելի հայրենակիցներին» ավելի շուտ հետաքրքրում է՝ դուք պատասխանատվություն, ի վերջո, կրում կամ կրելո՞ւ եք այն քաղաքական մթնոլորտի համար, որ տիրում է երկրում: «Սիրելի հայրենակիցները» ձեզնից ներողություն են ակնկալում եւ ոչ թե ճառեր ձեր «զգացողությունների» մասին:

Հետեւյալ տողերում Փաշինյանը մեկնաբանում է, թե ՔՊ-ի «էթիկայի կանոնագիրքը» ստանդարտներ է սահմանում հենց իրենց՝ ՔՊ-շնիկների համար: Կարելի է մտածել, որ ՔՊ-ն մի օր էլ հասարակության համար էթիկայի ստանդարտներ սահմանող կանոնագիրք կարող է ընդունել: Ծիծաղելի կլիներ, անշուշտ, Նիկոլին տեսնել հասարակական քարոզչի դերում… Մի հայհոյեք, մի կերեք իրար, մի մտեք միմյանց անձնական կյանք, մի շնացեք, մի կոռումպացվեք, ձեզ վրա մատ էլ թափ կտամ, պետք լինի՝ ուրիշ բան էլ թափ կտամ, կբռնեմ-կշինեմ, կլցնեմ ԱԱԾ-ի պադվալները… Եվ կրկին հարց է առաջանում՝ ՔՊ վարչությունն ո՞ւմ համար է ընդունել այս կանոնագիրքը՝ ի՞նչ, թե՞ հատուկ Նիկոլի համար, որ ի վերջո դուրս գա «հայհոյախոսության, անձնական թիրախավորման, վիրավորանքի դաշտից»:

Նիկոլը Նիկոլ չէր լինի, եթե ՔՊ «բարեվարքության կանոնագրքի» ընդունման կապակցությամբ մի շատ «կարեւոր» հիշեցում չաներ «սիրելի հայրենակիցներին» առ այն, որ վերջիններս, երբ ՔՊ-ն (բնականաբար՝ նաեւ ինքը) հայհոյանքին հայհոյանքով, վիրավորանքին վիրավորանքով չպատասխանի, դա չընկալեն որպես թուլություն կամ վախվորածություն, այլ՝ նվիրվածություն ՔՊ-ի «Էթիկայի կանոնագրքին»: Փաշինյանի այս հիշեցումը, սակայն, ինձ ուրիշ բաներ հիշեցրեց: Օրինակ, կարմիր կովի ու նրա կաշվի պատմությունը… Մյուս կողմից էլ ստիպեց հարց տալ ինքս ինձ՝ իսկ գուցե Փաշինյանը հոգնե՞լ է հայհոյելուց, հասկացե՞լ է, թե իր «բարեվարքությամբ» մինչեւ ուր է դեգրադացրել մեր հասարակությանը, մեր հոգեւոր եւ քաղաքական կյանքը: Ահավասիկ, իշխանության ղեկին 8 տարի կապիկություն անելուց հետո միակողմանիորեն որոշել են իրենց մի քիչ զուսպ պահել: Ինչ կա որ… Իսկ ինչ վերաբերում է հաթաթային, ապա այն անպակաս է քաղաքական օպոնենտներին ուղղված Նիկոլի մեկնաբանությունից. «Հանկարծ դա չհամարեք թուլության կամ ձեզնից վախենալու նշան»:

ՀԳ. *Բուն կանոնագրից ես մեջբերումներ չարեցի, որովհետեւ այն պահին, երբ ծանոթանում էի դրա բովանդակությանը, հանկարծ անհետացավ Նիկոլի էջից: Ավելի ճիշտ՝ հղումը մնաց, բայց այն այլեւս ոչ մի տեղ չէր տանում: Գուցե տեխնիկական խնդիր էր, գուցե տարան վերախմբագրելու, չգիտեմ: Հենց նորից երեւա, առաջարկում եմ անպայման կարդալ: Ոճը աստվածաշնչյան է, կետերը պատվիրաններ են հիշեցնում: Դրանցից մեկը, օրինակ, ասում էր՝ «մի կոռումպանար»:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՖՐԱՆՍԻԱ

ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ 27-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Ֆրանսիայում անցկացված սոցհարցումների համաձայն, «Ազգային միավորում» կուսակցության ներկայացուցիչ Ժորդան Բարդելան, որը Մարին Լը Պենի ամենամոտ համախոհներից է, կարող է ընտրությունների երկրորդ փուլում առաջ անցնել բոլոր մրցակիցներից: 2027 թ. նախագահական ընտրություններին դեռ բավական ժամանակ կա, սակայն սոցիոլոգները դեռ 23-ի մարտից սոցհարցումներ են անցկացնում՝ հասարակության տրամադրությունները ստուգելու համար: Ու գրեթե բոլոր հարցումներում առաջատար են «Ազգային միավորման» 2 դեմք՝ Մարին Լը Պենը կամ Ժորդան Բարդելան: Ընդ որում, Բարդելայի վարկանիշը սկսել է աճել շատ ավելի վաղ, քան դատարանը Լը Պենին արգելեց մասնակցել ընտրություններին:

2022 -ին դառնալով «Ազգային միավորման» նախագահ, Բարդելան 23-ին դեռ այնքան էլ ճանաչում չուներ: Ու եթե Լը Պենի օգտին պատրաստ էր քվե տալ 30-33 տոկոսը, ապա Բարդելայի օգտին՝ 23 տոկոսը: 2024 -ին Բարդելայի վարկանիշը սկսեց աճել ու հասավ 27-28 տոկոսի: 2024 թ. ապրիլին նա առաջ անցավ Լը Պենից՝ 30-33 տոկոս: Այդ ժամանակ Եվրախորհրդարանի ընտրություններն էին եւ նա, գլխավորելով «Ազգային միավորման» ցուցակը, կարողացավ դուրս գալ Լը Պենի ստվերից: Ուշագրավ է այն, որ բոլոր սոցհարցումներում Բարդելան չէր հաղթում, եթե նրա մրցակիցն էր դառնում Ֆրանսիայի նախկին վարչապետ եւ «Հորիզոններ» կուսակցության ղեկավար Էդուար Ֆիլիպը: Նման դեպքերում կամ քվեները հավասար էին բաշխվում, կամ հաղթում էր Ֆիլիպը: Ու ահա այս սոցհարցումները ցույց տվեցին, որ Բարդելան կարող է հավաքել 53 տոկոս, Ֆիլիպը՝ 47: Ընդ որում, ընտրությունների առաջին փուլի տեսական ուրվագծումը ցույց է տալիս, որ Ֆիլիպի քվեները սկսել են նվազել՝ 24-28-ից մինչեւ 15-19,5 տոկոսի: Փորձագետները ֆիքսում են, որ եթե նման ձեւով լինի քվեարկությունը, ապա Ֆիլիպը կարող է երկրորդ փուլ դուրս էլ չգալ: Իսկ մյուս թեկնածուները Բարդելայի համար ավելի հարմար են: Այսպես, Ժան-Լյուք Մելանշոնը համարվում է ծայրահեղ ձախական գործիչ ու «սարսափ»՝ ֆրանսիական միջին դասի համար: Նա կստանա առավելագույնը 11-12 տոկոս: Բարդելան նրա հետ մրցելիս կհավաքի 74 տոկոս:

Ձախա-կենտրոնամետ Ռաֆայել Գլյուքսմանը կհավաքի 14,5 տոկոս: Բարդելան նրա հետ մրցելիս կունենա 58 տոկոս քվե: Էդուարդ Ֆիլիպի խնդիրը գործող նախագահ Մակրոնի հետ առնչությունն է: Նա Մակրոնի նախագահության առաջին վարչապետն է եղել ու պահպանում է պոպուլյարությունը նաեւ նրա շնորհիվ, որ չի աղերսվում մակրոնականության անկման հետ՝ նա պաշտոնաթող է եղել 20 թվին: Բացի այդ, Ֆիլիպն իր ինքնությունն ունի, ու նրա ծրագիրն ավելի աջամետ է, քան Մակրոնինը: Աջա-կենտրոնամետ Ֆիլիպը քվեներ կարող է հավաքել թե՛ Մակրոնին «հավատարիմ» մնացած ընտրական զանգվածի շրջանում, թե՛ նրանց, ովքեր ժամանակին եղել են Շառլ դը Գոլի ու նրա կողմնակիցների ընտրազանգվածի մաս, ովքեր քվեարկել են Ժակ Շիրակի ու Նիկոլա Սարկոզիի օգտին: Հիմա այդ ընտրողների մի մասը մնացել է Հանրապետական կուսակցության կողքին, մի մասն անցել է Լը Պենի ու Բարդելայի կողմը: «Ազգային միավորման» դաշնակիցը դըգոլականների ոչ մեծ՝ «Աջամետների միություն՝ հանուն հանրապետության» կուսակցությունն է, որը ղեկավարում է Էրիկ Սյոթին՝ հանրապետականների նախկին ղեկավարը: Ֆիլիպի համար նման ընտրազանգվածը նաեւ խնդրահարույց է՝ կապված դիրքավորման հետ: Եթե նա դեմ գնա Մակրոնին, ու նրա կուսակցությունը դուրս գա կառավարությունից, կկորցնի մակրոնական ընտրողների աջակցությունը: Առայժմ նա դեռ Մակրոնի կողքին է, ու նրանից հեռանում են այն ընտրողները, ովքեր կարծում են, որ Մակրոնն անպատասխանատու է վարվել անցյալ տարի անցկացնելով արտահերթ խորհրդարանական ընտրություններ ու երկրի քաղաքական կյանքը հասցրել է անկայուն վիճակի:

Ներկայիս դասավորությամբ պառլամենտում հնարավոր չի լինում ձեւավորել կայուն կառավարություն: Սա հետաքրքիր մետամորֆոզ է ֆրանսիական քաղաքական իրականության համար: Նախկինում միշտ «Ազգային միավորումն» է եղել ապակայունացնող գործոն, հիմա այդ դերում հայտնվել է կենտրոնամետ նախագահը: Ու այս իրավիճակում միջին դասի ավելի ու ավելի շատ ընտրողներ կարծում են, որ Բարդելան կհաղթի, կանցկացնի նոր խորհրդարանական ընտրություններ, «Ազգային միավորման» ու դաշնակիցների կազմած մեծամասնությունից կձեւավորի կառավարություն, որն ի վիճակի կլինի երկար աշխատել: Նման սցենարն ավելի ու ավելի ընդունելի է դառնում: Հատկապես, որ Բարդելան, ի տարբերություն Լը Պենի, «ֆաշիստական անցյալի» իմիջ չունի:

Հանրագումարում, իհարկե, չի կարելի պնդել, թե առաջիկա նախագահական ընտրություններում անպայման Բարդելան է հաղթելու: Դեռ տարիուկես կա, ու նա դառնալու է քննադատությունների հիմնական թիրախը: Եվ մեկուկես տարում շատ ջրեր կհոսեն, սակայն, ամեն դեպքում, Բարդելան բավականին լուրջ հայտ է ներկայացրել:

Հեղինակ՝
Ալեքսեյ Մակարկին

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ե՛Վ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Է, Ե՛Վ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀ

Լոռվա մարզի Ստեփանավան համայնքում գործում է «Դիմակայուն Ստեփանավան» բարեգործական հիմնադրամը, որի հիմնադիր տնօրենը Ստեփանավանի ղեկավարի խորհրդական Լուսինե Հովհաննիսյանն է, իսկ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ է ընտրվել համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանը: Ըստ պետռեգիստրի՝ հիմնադրամը ստեղծվել է 2021 թվականին: Վերջերս էլ Ստեփանավանի ավագանին որոշեց քաղաքի վարչական տարածքում գտնվող, 16.29061 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողն անհատույց օգտագործման իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրել «Դիմակայուն Ստեփանավան» բարեգործական հիմնադրամին՝ ջերմոցային տնտեսություն հիմնելու նպատակով:

Հիմնադրամի ֆեյսբուքյան էջից տեղեկացանք, որ «Դիմակայուն Ստեփանավան» բարեգործական հիմնադրամը դրամահավաք է կազմակերպում՝ համայնքի համար ժամանակակից տեխնիկա՝ 1 բեռնատար, 2 աղբատար, փողոցները լվացող եւ մաքրող մեքենա ձեռք բերելու համար: Հիմնադրամի տնօրեն **Լամարա Մարտիրոսյանից** հետաքրքրվեցինք, թե ինչ նպատակով է ստեղծվել հիմնադրամը, եւ Ստեփանավանի համայնքապետարանն արդյոք չի՞ կարողանում իր քաղաքի համար տեխնիկա գնել, որ հիմնադրամն է այդ կարիքը հոգում: «Հիմնադրամը գործում է ի շահ համայնքի: Մենք համայնքապետարանի հետ ունենք կնքած հուշագիր՝ կոնկրետ տեխնիկայի համար, որ մենք ուզում ենք օգնել իրենց, ինչ խնդիր կա»: Ի՞նչ միջոցներով եք օգնում: «Կոնկրետ համայնքի կարող ուժերով կամ ծրագրերով: Նրանք, ովքեր ուզում են մեր կողմը լինել, հիմնադրամում միջոցների հավաքագրմանը չկա սահմանափակում: Համայնքապետարանն ունի նման մեքենաներ, բայց չեն հերիքում: Շուտով համայնքում խոշորացում է լինելու, համայնքներ են միանալու, այս պահին էլ չեն բավականացնում աղբահանության համար: Մոտ 2 ամիս է, ինչ սկսել ենք դրամահավաքությունը, բավականին գումար ունենք հավաքված: Ամեն բան թափանցիկ է, մենք հրապարակում ենք արդյունքները եւ հաշիվները: Հիմնադրամին բոլոր գումարները փոխանցվել են բարերարների կողմից, համայնքապետարանը մեզ աջակից է, որովհետեւ գործում ենք ի շահ համայնքի»: Կասեք, թե ով է հիմնադրամին ամենաշատ գումար փոխանցած բարերարը: «Այս պահին չեմ կարող ասել, դա պետք է քննարկվի բարերարի հետ, նոր անունը հրապարակվի: Հետեւեք մեր ֆեյսբուքյան էջին, այնտեղ ամեն ինֆորմացիա տեղադրում ենք»: Արմեն Գրիգորյանը թե՛ համայնքապետ է, թե՛ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը, որքա՞ն գումար է նա փոխանցել հիմնադրամին: «Քաղաքապետը փոխանցում չունի կատարած: Մենք միայն բարեգործների միջոցով ենք անում»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«88» սուպերմարկետն աշխատողներ չի գտնում

Վերջերս Նոյեմբերյան քաղաքի կենտրոնում նախկինում գործող առեւտրի կենտրոնի տարածքը վարձակալությամբ վերցնելով՝ «88» ցանցի սուպերմարկետ են գործարկել: Հանրության մեջ սուպերմարկետների այդ ցանցը կապում են Աննա Հակոբյանի հետ, որը երեկ ժխտել է իր կապն այդ ցանցի հետ: Նոյեմբերյանում այդ ցանցի սուպերմարկետը որոշ դժվարություններ է ունեցել: Մեզ բնակիչները հայտնեցին, որ Նոյեմբերյան քաղաքում եւ համայնքի 18 գյուղերում սուպերմարկետի մենեջեր չեն կարողացել գտնել, ուստի Իջեւան համայնքից են մենեջեր ընդունել: Զրուցեցի սուպերմարկետի մենեջեր Նարեկ Մարտիրոսյանի հետ, հարցրի՝ նախկինում սուպերմարկետի մենեջեր աշխատե՞լ է: Ասաց, որ մենեջեր չի աշխատել, սակայն այդ ոլորտում 10 տարվա աշխատանքի փորձ ունի: Սուպերմարկետում վաճառողներն աշխատում են 3 հերթափոխով՝ առավոտից մինչեւ ժամը 16-ը, ժամը 16-24-ը եւ 24-ից մինչեւ առավոտ, ամեն հերթափոխը՝ 8 ժամ: Յուրաքանչյուր հերթափոխի համար վաճառողները վարձատրվում են 3 հազար դրամի չափով, այսինքն, ամեն ամիս, շաբաթը միայն մեկ հանգստյան օր ունենալով, ամսական ստանում են 85 հազար դրամ: Նոյեմբերյանցի վաճառողուհիները դժգոհ են, որ «88» սուպերմարկետի երեւանցի վաճառողն ամեն հերթափոխի համար ստանում է 9 հազար դրամ, իսկ իրենք՝ դրանից 3 անգամ քիչ: Այդ տարբերության մասին հարցրի Նարեկ Մարտիրոսյանին: Ասաց, որ Երեւանում սուպերմարկետը բազում անգամներով ավելի շահույթ է ապահովում, այդ պատճառով էլ վարձատրության նման տարբերություն կա: Կեսգիշերին իրենց աշխատանքն ավարտող վաճառողները դժվարություն են ունենում տուն՝ Նոյեմբերյանի գյուղեր հասնելու հարցում: Մարտիրոսյանն ասաց, որ կեսգիշերին աշխատանքն ավարտողներին իրենք տաքսու վճար են փոխհատուցում՝ ողջամտության սահմաններում: Այդ դեպքում ինչո՞ւ են աշխատանքից հեռացել սուպերմարկետի մի շարք աշխատողներ: Ասաց, որ վաճառողուհիներից մեկը՝ Ոսկեպար գյուղի բնակչուհի, աշխատանքից հեռացել է տրանսպորտային դժվարությունների պատճառով, իսկ 3-4 աշխատողի իրենք են հեռացրել՝ աշխատանքային կարգապահության խախտումների, սուպերմարկետի համազգեստը պատշաճ չկրելու եւ այլ պատճառներով: Նոյեմբերյանցիներին զարմացրել է, որ այդ սուպերմարկետում օրական 3 անգամ, տարբեր ժամերի ապրանքների գնապիտակներ են փոխում: Մենեջեր Մարտիրոսյանն ասաց, որ դա արվում է ի շահ գնորդների՝ որոշակի ժամերին ապրանքների էժանացման նպատակով:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Արատով բուժում են արատը

Երկրի գլխավոր բուժակն արդեն շատ ամիսներ ճգնում է իբր «բուժել», արմատախիլ անել Հայ առաքելական եկեղեցում իր պեղած-հայտնաբերած արատավոր երեւույթները: Մինչ այժմ չի հաջողել, բայց նա հուսահատվել չգիտի: Հետեւողական փնտրտուքից առույգացած՝ սենսացիոն եզրահանգման եկավ. «Արատը պետք է բուժել... արատով»: Բա ո՞նց, շան կծածը շան մազը կլավացնի:

Բարձրաստիճան մի խումբ եկեղեցականներ նամակ գրեցին անարատ բուժակին: Ոմանք կարծում են, որ դա արել են կոմպրոմատներից փրկվելու նպատակով, մինչդեռ, խայտառակվելուց զատ ոչինչ չեն շահելու: Տեղեկացանք՝ ովքեր են դեռ սրբազան համարվող այդ անձինք: Գլխավոր դեմքը Բենթլի Կճոյանն է: Ճանաչում եք նրան՝ Արարատյան թեմի առաջնորդն է: Նրան, որին դեռ իշխանությունը չզավթած՝ վարդագույն երազներով նախկին պատանին ԱԺ ամբիոնից քննադատում-անվանարկում էր, թե անօրինական ճանապարհով թանկարժեք մեքենաների տեր է դարձել, գործարարին է «քցել», սրբապիղծ է, այլեւայլ հանցագործությունների հեղինակ է... Թքած, որ այդ ամենը հիմա էլ կա, մարդը նույն արատավորն է, «քցող» էր՝ «քցող» էլ մնացել է, միայն «քցելու» օբյեկտն է փոխվել: Այս անգամ թիրախում Հայոց եկեղեցին, Վեհափառ հայրապետն են, որի ձեռամբ նա օծվել է:

Մյուսներն էլ «սուրբ ու կույս» չեն: Մեկը սիրուհիներ ունենալու համար վիրահայոց թեմից է հեռացվել, ցավն էլ դա է, որ չի վռնդվել եւ կարգալույծ չի արվել: Նրան, առոք-փառոք, Վեհափառի կամեցողությամբ, ուղարկել են ծովափնյա երկիր: Բայց դա չի նշանակում, թե սրբապիղծ արարքները մաքրել են վրայից: Գարշահոտը փչում էր անգամ այդ նամակից, որը ստորագրել էին 10 «կույսերը»: Ահա, այդ սրբապիղծն էլ է մարտի ելել իր ներողամիտ բարերարի հանդեպ: Մյուսը, ասում են, Արգիշտի Քյարամյան անուն-ազգանունով որդի ունի: Գտնում է, որ իրեն կարելի է որդի ունենալ՝ միայն իրեն, չէ՞ որ ինքը «վերին արտի ցորենն է»: Որ մեկի կենսագրությունն էլ փորփրես, եթե չասենք՝ սրբապիղծ, գոնե՝ վատ, աններելի, հոգեւորականին անվայել մի բան կգտնես:

Երկրի գլխավոր բուժակը, ահա, սրանց է հրավիրել թագավորաց պալատ ու խորհրդակցել, թե ինչպես բուժեն եկեղեցում առկա արատները: Որքան էլ մենք հառաչենք, նրանք որոշել են շարժվել «քամուն ընդառաջ»՝ արատավորներով պայքարելու են արատի դեմ...

Բայց մենք շնորհակալություն հայտնենք բոլորին՝ մայր եկեղեցին մաքրվեց նամակն ստորագրած անձանցից, ստոր եւ ապականված հոգեւորականներից: Մնում է, որ Մայր Աթոռը հատուկ կոնդակով վավերացնի փաստը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

20-30 աշակերտ ունեցող դպրոցում ի՞նչ վարչատնտեսական մասի համակարգող

Հիշխանությունը նոր հաստիքներով մեծացնում է առանց այդ էլ ուռճացած պետական ապարատը: Նոր հաստիք է պետական հանրակրթական դպրոցների վարչատնտեսական մասի համակարգողի հաստիքը, որոնց դպրոցներում կոչում են «դպրոցների 2-րդ տնօրեններ»: Աշակերտների փոքր քանակ ունեցող, գյուղական դպրոցների տնօրեններն առանց հավելյալ ջանքերի կարող են ուսումնական գործընթացը ղեկավարելուց զատ, այդ կրթօջախների վարչատնտեսական հարցերը լուծել, ինչ կարիք կար այդ գործառույթի համար նոր պաշտոններ սահմանելն ու նշանակելը:

Ներկայացնեմ փաստերով: Տավուշի մարզի 76 հանրակրթական դպրոցների ավելի քան 1/3-ը՝ 28 դպրոց, ունի 100-ից պակաս թվով աշակերտներ: Աճարկուտ գյուղի հիմնական դպրոցն ունի 13 աշակերտ, Բարեկամավանի միջնակարգ դպրոցը՝ 15, Լուսահովտի հիմնական դպրոցը՝ 28, Իծաքարի հիմնական դպրոցը՝ 29, Գոշի հիմնական դպրոցը՝ 34, Կիրանցի հիմնական դպրոցը՝ 37, Աղավնավանքի միջնակարգ դպրոցը՝ 37, Չինչինի միջնակարգ դպրոցը՝ 41, Խաչարձանի միջնակարգ դպրոցը՝ 49, Վարագավանի միջնակարգ դպրոցը՝ 50, Դեղձավանի հիմնական դպրոցը՝ 50, Լուսաձորի հիմնական դպրոցը՝ 51, Ջուջեւանի միջնակարգ դպրոցը՝ 53, Դովեղի միջնակարգ դպրոցը՝ 57, Հովքի միջնակարգ դպրոցը՝ 60 աշակերտ: Երեւանի պետական հանրակրթական դպրոցների 1-2 դասարանի չափ աշակերտ ունեցող դպրոցներում վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնը շռայլություն է աղքատ Հայաստանի՝ նաեւ վարկերով ձեւավորվող պետբյուջեի հաշվին:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Նոյեմբերի 19-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներից քանիսո՞ւմ է նշանակված վարչատնտեսական մասի համակարգող: Ի՞նչ առաջնահերթությամբ եք դպրոցներում նշանակում վարչատնտեսական մասի համակարգող, ի՞նչն է պատճառը, որ մարզի փոքր, նորակառույց դպրոցներում վարչատնտեսական մասի համակարգող եք նշանակել, իսկ մեծ, բազում խնդիրներ ունեցող դպրոցներում՝ ոչ»:

Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Նոյեմբերի 19-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներից 16-ում նշանակված է վարչատնտեսական մասի համակարգող: Կառավարման նոր համակարգի անցած դպրոցներում նոր կարգով դպրոցի տնօրեն ընտրելուց հետո դպրոցում նշանակվում է վարչատնտեսական մասի համակարգող»:

Հիմա տեսնենք, թե մարզպետարանի պատասխանը համապատասխանո՞ւմ է իրականությանը: 2025թ. հունիսի 30-ին մարզպետ Ղալումյանը որոշում է կայացրել Սուսաննա Փաշինյանին նշանակել Կիրանցի հիմնական դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչեւ այդ պաշտոնում մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը (նշանակումը): Չնայած Փաշինյան ազգանվանը, Սուսաննա Փաշինյանը Նիկոլ Փաշինյանի ազգականը չէ, Կիրանցից հայտնում են, որ նա ընդամենը հիշխանության կողմնակիցներից է: Մինչ այդ՝ հունիսի 27-ին, մարզպետը որոշում էր կայացրել երկար տարիներ Կիրանցի դպրոցը ղեկավարած Վոլոդյա Բաբինյանին ազատել Կիրանցի դպրոցի տնօրենի պաշտոնից. լուծել նրա հետ 2020թ. հուլիսի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը, բայց նաեւ Վ. Բաբինյանին անգործ չթողնել. 2025թ. հունիսի 30-ին նրան նշանակել է Կիրանցի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող՝ կնքելով աշխատանքային պայմանագիր: Այս տարվա հուլիսի 31-ին լրացել է Բաբինյանի 62 տարին. կենսաթոշակի անցնելու շեմին գտնվող Վ. Բաբինյանին մարզպետը «պարգեւատրել» է 2024թ. սեպտեմբերին բացված, 37 աշակերտ ունեցող դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնով: Իսկ դպրոցում նոր տնօրեն դեռ չի ընտրվել, սակայն դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողն արդեն նշանակվել է, ինչը հերքում է մարզպետարանի պատասխանում նշվածը: Իսկ Վ. Բաբինյանն այն մարդն է, որը Կիրանցի դպրոցում երկու ձեռքով, խանդավառված, բարեւում էր 2024-ին սահմանազատման անվան տակ միակողմանի, ապօրինի կերպով Կիրանց գյուղի 15 հեկտար հողերն Ադրբեջանին հանձնած Նիկոլ Փաշինյանին: Կարծիք կա, որ 2026թ. ԱԺ ընտրություններից առաջ «յուրայիններին» դպրոցներում վարչատնտեսական մասի համակարգողներ նշանակելով՝ իշխանությունը փորձում է նրանց միջոցով ընտրություններում իր համար որոշակի թվով ձայներ ապահովել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Կաթողիկոսական աթոռը խաղալիք չէ

Ազգասարակ, առանձին բան է իրավունքը, առանձին բան է հասկացողությունը: Վերջին ժամանակներս մեզանում այնքան շատացել են մի տեսակ մեծահասակ ... երեխաները, որոնց ուղեղների մեջ, փոխանակ մտավոր պաշարներ լինեին, մտել, նստել ու թաղվել են մի քանի զմռսված՝ իրավունք արտահայտող բանաձեւեր, զորօրինակ. «Եկեղեցին իրավունք չունի միջամտելու այսինչ կամ այնինչ բանին», «Կաթողիկոսն այս կամ այն պատճառով իրավունք չունի գահակալել» եւ այլն:

Այդ մարդիկ ավելի հեռու են մեր ազգից, մեր եկեղեցուց, քան երկրագնդի վրա ապրող մարդը՝ Լուսնից եւ աստղերից: Բայց ազգային եկեղեցու մասին խոսելիս պետք է կանխորոշել մեր վերաբերմունքը դեպի Մայր Աթոռ: Ազգի հասկացողության տեսակետից՝ դրոշը, զինանշանը, օրհներգը եւ կաթողիկոսն այն անհերքելի ուժն են, որ միացնում ու ձուլում են ամբողջ ազգը: Սկզբունքորեն դեմ եմ, որ կաթողիկոսի անձը վեճերի ու բանավեճերի առարկա լինի: Մի՞թե դրոշակն ընդամենը լաթ է եւ փայտի կտոր: Կաթողիկոսը միշտ էլ եղել է մի հայտնի դրոշակ՝ մեր ազգի ամբողջության, միասնության գաղափարներից մեկը: Սրանով չեմ քարոզում, թե ազգը հարկավոր է բաժանել հանուն հավատի, բայց պահանջում եմ, որ կաթողիկոսն «ազգի պետ» հասկացվի:

Երբ ազգի կամքին հակառակ ընտրվեց Մակար կաթողիկոսը, Ռափայել Պատկանյանն առաջինը խոնարհվեց այդ ընտրության առաջ: Նա նաեւ շատ հակառակ էր Խրիմյան Հայրիկի ընտրությանը, որին մոտիկից ճանաչում էր, բայց երբ նա ընտրվեց, մեծ բանաստեղծը հնազանդվեց, որպեսզի կաթողիկոսության գաղափարը չտուժի: Խրիմյան Հայրիկից հետո, չնայած կղերականները գոռում էին՝ «Օրմանյա՛ն, Օրմանյա՛ն», եւ իրավ, որ Օրմանյանի քանքարն ու ժողովրդականությունն անքննելի էին, սակայն ընտրվեց Մատթեոս Բ-ն, որի առաջ ազգը մի կամք, մի ուժ, մի հոգի դարձավ, եւ բոլորով խոնարհվեցին ոչ թե անձի, այլ՝ գաղափարի առաջ. գաղափար, որ պետք է փրկեր:

Քննադատելով կաթողիկոսին՝ մենք թաղում ենք մի մեծ գաղափար: Քննադատեք դիվանատունը, սինոդը, բայց Վեհափառի մասին ոչ մի աննպաստ կարծիք, խոսք, ակնարկ. Վեհափառը նույն ինքը՝ եկեղեցին է: Ազնիվ, քանքարավոր Վեհափառի համար Լուսավորչի գահը վաղուց Գողգոթա է: Բայց Գողգոթայից լույս իջավ աշխարհին, հալածեց խավարը եւ ազատեց մարդկությանը մահից: Ահա, եւս մի կաթողիկոս, որը կամաց-կամաց բարձրանում է իր Գողգոթան, եւ, չնայած դրան, այսօր շարունակվում է բորբոքվել մի լիրբ ու ազգակործան քաղաքականություն՝ դեպի Էջմիածնի Աթոռը, որին հետեւում է մեր հոգեւորականների մի մասը՝ ձգտելով փչացնել կենդանի ծառի արմատները:

«Կենդանի ծառը դուք չե՞ք, հայր սուրբե՛ր, այն ձերը չէ: Կենդանի ծառը Էջմիածինն է: Նա Ազգինն է: Եթե դուք չեք ուզում կամ չգիտեք խնամել այդ ծառը, գեթ խնայեցեք՝ մի մոտեցեք»: Չի կարող Ազգը տուժել տասնյակ, նույնիսկ հարյուր, նույնիսկ հազար անհիմն գործած սխալների համար... Մոռանա՞նք բոլորս մեր անձնականը, մեր «ես»-ը, մեր կրքերը, ի դերեւ ելած մեր հույսերը... Դեմ-հանդիման կանգնած են այսօր ազգը եւ կաթողիկոսը. ազգը՝ կարոտ կաթողիկոսի եռանդին, կաթողիկոսը՝ կարոտ ազգի սիրուն: Թող այս խոսքերը բեռնեն մեր ուղեղները: Եկեք իրականացնենք այն փափագը, որ տաքացնում է ամեն մի ազնիվ սիրտ:



Արթուր ԱՎԱԳՅԱՆ

ԻՆՉՈՒ ԵՂԱՎ ԱՅՍՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՀԱՍԱՆՔ ՇԻԿԱՑՄԱՆ ԱՅՍ ԿԵՏԻՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանյան ներքին կյանքում՝ եկեղեցու շուրջ ձեւավորված իրադրությունը, խոստովանենք, սկսում է տհաճ դառնալ: Պարզ է, որ եկեղեցու ու Հայաստանում իշխող վերնախավերի առճակատումը դեռ շարունակություն է ունենալու: Երեկվանից արդեն հակադարձումներ են հնչել «հակառակ ճամբարից», եւ թե՛ Միքայել, Բագրատ եւ Մկրտիչ սրբազանների հայտարարությունները, թե՛ Արշակ արքեպիսկոպոսի դեկտեմբերմեկյան հարցազրույցը, թե՛ եկեղեցու հայտարարությունը՝ դեկտեմբերի 12-ին եպիսկոպոսաց ժողով հրավիրելու մասին, այդ հակադարձման էլեմենտներն են: Չի բացառվում, որ հակամարտող կողմերի միջեւ այս փոխհրաձգությունը դեռ շատ «սերիաներ ունենա»:

Այս ողջ հակամարտության մեջ մեզ առավելապես հետաքրքրում է մի բան՝ ինչու եղավ այսպես, ինչու շիկացումը հասավ այն կետին, որը ներկայում կա, եւ արդյո՞ք անդարձելիության կետը հատվել է: Միանգամից նշեմ, որ նպատակ չունեմ պաշտպանելու ճամբարներից եւ ոչ մեկին: Ես առանձնապես ջերմեռանդ հավատացյալ չեմ, եւ, մեծ հաշվով, ինձ համար «եկեղեցական թեմատիկան» զուտ տեսական ուսումնասիրության նյութ է, որով հետո արձանագրվելու է Հայ առաքելական եկեղեցու նորագույն պատմության շրջանը եւ հայ ժողովրդի պատմության մաս է կազմելու: «Հրապարակի» էջերում բազմիցս անդրադարձել եմ՝ գրելով, որ, ըստ իս, մեծ հաշվով, ճիշտ չեն բոլոր կողմերը.

• իշխանությունը, որովհետեւ իշխանություն է ու խնդիրները ներկայացնելու, բարձրաձայնելու ու դրանց լուծումներին հետամուտ լինելու այնպիսի ճանապարհ պետք է ընտրեր, որը հարցերի նշաձողը չիջեցներ սոցկայքային «ճակատամարտերի» կամ մեր պետականության երկու կարեւորագույն ինստիտուտների առճակատման մակարդակի:

• Քաղաքական դաշտի ոչ իշխանական հատվածի խաղացողները, որոնք եկեղեցու առումով ավելորդ մաքսիմալիստական պատկերացումներ ունեն եւ, պատկերավոր ասած՝ «եկեղեցու զանգերը պետք է ղողանջեն» արտահայտությունը դարձրել են փորձաքար ու ինչ-ինչ հարցերի ծագման առիթ են տվել:

• Եկեղեցին էլ չպետք է տրվեր գայթակղությանն ու տուրք տալով «ազգային եկեղեցի» հասկացության «ազգային» եզրույթին՝ ընկներ այնպիսի ծայրահեղության մեջ, որ երկրորդ պլան մղեր «Աստծունը՝ Աստծուն, կայսրինը՝ կայսեր» Հիսուս Քրիստոսի տված պատգամն ու հաստեր «ազգայինի» ու «քաղաքականի»՝ շատ նուրբ, երբեմն նույնիսկ՝ անտեսանելի սահմանը: Եվ մտներ մի դաշտ, որն իրենը չէ զուտ միայն այն պատճառով, որ եկեղեցու հիմնադիր «Հիսուս Քրիստոսի քարոզած արքայությունն այս աշխարհից չէ»:

Մյուս կողմից, պետք է արձանագրել, որ առաքելական եկեղեցում կան բավականին լուրջ ներքին խնդիրներ, որոնք երեկ չեն առաջացել, տարիներ շարունակ եղել են, կուտակվել եւ հիմա՝ «պատեհ առիթով» դուրս են հորդել: Օրինակ, նույն կուսակրոնության ուխտը, որն իր դարն ապրած սահմանափակում է եւ պետք է հանվի եւ այլն: Եվ եթե ուշադիր կարդանք հակամարտող կողմերի «փոխհրաձգությամբ» տեքստերը, կարող ենք տեսնել բազմաթիվ ակնարկներ ե՛ւ միջանձնային հարաբերություններում եղած լարվածությունների, ե՛ւ եկեղեցական վերնախավում որոշակի «ճամբարների» գոյության, ե՛ւ եկեղեցու ղեկավարության վարած կադրային քաղաքականության հանդեպ վերապահումների, ե՛ւ բավարարված կամ չբավարարված ամբիցիաների հետ կապված: Ընդ որում, սա ամբողջական ցանկը չէ:

Այստեղ խնդիրներից յուրաքանչյուրը եթե առանձին-առանձին վերլուծենք, ապա կհասնենք մի հանգրվանի, որ խնդիրների արմատը նրանում է, որ առաքելական եկեղեցին մինչեւ հիմա չունի իր Սահմանադրությունը կամ մայր կանոնադրությունը, Մայր Կանոնագիրքը: Խոսքը պատմական «Կանոնագիրք Հայոցի» մասին չէ, այլ՝ առաքելական եկեղեցու, ինչպես նաեւ ավանդական ընդհանրական եկեղեցու կանոնական ժառանգությունների, պրակտիկայի, պատմության մեջ արձանագրված նախադեպերի ու այլ բաղադրիչների հիման վրա կազմված այնպիսի մի կանոնադրության, որպիսին պետություններում Սահմանադրությունն է կամ մայր օրենքը, որով հնարավոր կլիներ առաջնորդվել ու որը խնդիրներ առաջանալու դեպքում կտար ծագող հարցերի պատասխանները:

Մյուս կարեւոր խնդիրը, ըստ իս, Հայաստանի ներսում պետական իշխանությունների եւ առաքելական եկեղեցու միջեւ հարաբերությունների թերի կարգավորվածությունն է: Այս մասին էլ բազմաթիվ անգամներ գրել ենք, որ անհրաժեշտ է այնպիսի իրավական փաստաթուղթ, որը կսահմանի երկու կողմերի բոլոր իրավունքներն ու պարտականությունները բոլոր հարթություններում՝ բոլոր մակարդակներում: Եվ կարեւորը նշված բաղադրիչների ինստիտուցիոնալացումն է, քանի որ միայն այդկերպ է հնարավոր խուսափել այն տհաճ վիճակներից, որը կա այսօր:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 3.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԼԿՏԻ ԽՆՋՈՒՅՔԸ ԵՐԿԱՐ Է ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ ՀՈՏԸ ԽԵԼՔԻ ԳԱ

Հեներիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աշխարհի խոշոր պետությունների ղեկավարները նավթի եւ գազի վառարաններով տաքացվող սրահում քրքջում ու աղմկում էին: Ձարդված ողնաշարով խոյը դրված էր ճոխ սեղանին, նրա դիակի շուրջ 5 հազար հոշոտված եւ մորթված անմեղ գառնուկներ էին: Օրվա թամադան սեւ գայլն էր, նրա օգնականը՝ շնագայլը: Մեծն թամադայի կողքին նստած էր արջը՝ յուղալի պատառը լափելիս: Հյուսիսի առյուծն էլ, արջի դիմաց նստած, լափում էր իրեն հասանելիքը: Աղվեսը շատ գոհ էր իր նախաձեռնած ծրագրից, որի պատճառով ստացել էր ավարից մեծ բաժին: Հարավի առյուծը քնաթաթախ էր, շվարած:

Մառախուղի մեջ, հեռվից երեւում էր մերկ ու գեղեցիկ, խոշտանգված ու բռնաբարված ճշմարտությունը: Իսկ կողքին իրենից գոհ փիղն էր եւ ոչ թե ավանակը, այլ էշը՝ այսօրվա աշխարհի տերը: Հավաքված գազաններն ուտում էին, խմում եւ փառաբանում գայլի ու շնագայլի դաժանությունները, 5 հազար գառնուկներին մորթելու արհեստավարժությունը: Որոշ սեղանակիցներ որ աղմկում էին, գայլը մի փոքր կտոր էր նետում, ու անարդարության դեմ խոսողն անմիջապես ներողություն էր խնդրում եւ շարունակում ուտելը:

Սակայն ցավն այն է, որ ամենից շատ գովաբանում էին սեւ այծին, թե նա ինչ ճարպկությամբ կարողացավ մոլորեցնել, համոզել մի ամբողջ հոտի, որ իրենց հիմնական ու գաղափարական թշնամին հովիվն է, որը նախկինում քանի-քանի գառ ու ոչխար է կերել, ինչի պատճառով ոչխարները չեն բազմացել, սոված են մնացել եւ երջանիկ չեն եղել: Հենց նա էր համոզել՝ քշել հովվին, եւ մոռացել էին իրենց լավ օրերը, արոտները, հակառակ դեպքում կզրկվեին գոմից ու մարագից:

Խնջույքի մասնակիցները, իրար հերթ չտալով, գովում էին սեւ այծին՝ այն բանի համար, թե ինչպիսի նենգությամբ կարողացավ մոլորեցնել խոյին, տարավ ծուղակ, վերեւից հարվածելով թիկունքին՝ ջարդեցին նրա ողնաշարը եւ հոշոտեցին անտեր, թափառական գառներին:

- Այնուհետեւ կգնաս, կասես հոտից կենդանի մնացածներին, որ շատ չտխրեն իրենց գառների ու խոյի համար: Ասա նրանց, որ թույլ կտանք շնչեն եւ քիչ էլ ջուր խմեն: Թող մոռանան իրենց նախնիներին, գյուղերը, գոմերը, գերեզմանները, կանաչապատ սարերը, թե չէ՝ մնացածն էլ կիշխենք: Կամ՝ ինչո՞ւ են սպիտակագլուխ գագաթով սարից խոսում: Ո՞վ է տվել նրանց ճշմարտությունն ասելու, անցյալն իրենց սրտում պահելու իրավունք:

Դու քո հոտն այնպես պետք է բաժանես, որ չձգտեն միավորվել ինչոր մի թափառական հովվի շուրջ, եւ չպետք է ունենան իրենց պաշտպան՝ խոյ: Դու պետք է կարողանաս ջնջել նրանց հիշողությունը, չպետք է հիշեն՝ «իրենց ուժը միասնության մեջ է» հայտնի ասացվածքը: Հոտը բաժանիր սեւ եւ սպիտակ ոչխարների, թշնամանք տարածիր նրանց մեջ: Լսիր, կարծես ոչխարների մի մասը խելքի է եկել, եւ ուզում են հետ բերել հովվին: Լսո՞ւմ ես, տես, հա, չձախողես պլանը, թե չէ՝ ինչո՞ւ ենք քեզ այսքան պատասխանատու, մեծ իրավունքներ տվել: Դու շատ լավ գիտես ինչպես մոլորեցնել հոտը, չկրկնեմ: Իսկ եթե չհաջողվի, պոզահարիր, զրկիր ջրից ու ուտելիքից, մենք քեզ տալիս ենք այդ իրավունքը: Կհամոզես հոտին, որ գայլը, շնագայլը, փիղը, աղվեսը եւ էշն իրենց ամենամեծ բարեկամներն են:

Խաբիր՝ ինչքան կարող ես, դա քո հաղթանակի նշանաբանն է: Քեզ մոտ դա հոյակապ է ստացվում, ապրես: Պարբերաբար պատմիր լույսի ու մթի, սեւի ու սպիտակի մասին հեքիաթները: Հայտարարիր, որ արեւը ծագում է արեւմուտքից, սխալ է եղել, որ հայր ու մայր, էգ ու արու գոյություն ունեն:

Սուտն ու կեղծիքը տիրել են աշխարհը: Աշխարհը զբաղված է խնջույքով: Տաք սենյակներում բոլորը կուշտ են, գոհ ու երջանիկ: Այստեղ գայլերը կուշտ են, ոչխարները՝ անվնաս: Իսկ գառնե՞րն ինչ եղան: Դե ոչինչ, նրանք նորից կծնվեն, նորից կհավաքվենք, մատաղ կանենք: Դա է պահանջում աշխարհի տերերի արդարությունն եւ խաղաղությունն ասածը:

Տաք սրահում աշխարհի հզորները քննարկում, խժռում, աղմկում են, իսկ սեղանին ի՞նչ է դրված՝ զոհաբերված Հայաստանը: Այս լկտի խնջույքը երկար է շարունակվելու, այնքան ժամանակ, մինչեւ հոտը խելքի գա, քշեն այծերին, կանչեն հովվին եւ գայլխեղդ շներին: Հովիվը եւ շները կհամախմբեն բոլորին՝ սեւերին ու սպիտակներին, եւ այդ ժամանակ Խուստուփ լեռան լանջից կելնի նոր, երիտասարդ, ազգային գաղափարներով տոգորված Գարեգին Նժդեհը: Այդ օրվանից 5 հազար գառնուկ զոհաբերած ու 6 տասնյակից ավելի գերի այծեր ունեցող Հայաստանը կսկսի շնչել, մտքում արտաբերելով՝ փառք քեզ, Աստված...

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am